ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ»ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԳՐՈՂԻ ՀԵՏ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԿԱՐԻՆԵ ԱՐՍԵՆՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՎԱՀԱՆՅԱՆ

Աշտարակ 2022

Բովանդակություն

Ներածություն……3
Գլուխ 1. Գրականությունը որպես իրականության պատկերում
1.1. Գրականության խոսքի ոլորտը……6
1.2. Գրողին ճանաչելու ուղիներով……..7
1.3. Խոսքի հրաշքը……..9
Գլուխ 2. Իրականության արտացոլման կերպերը ……11
2.1. Հեքիաթի և իրականության պայմանական իրականությունը……12
2.2. Բանաստեղծություններում երազի իրականության ընկալումը…14
2.3. Կարոտի իրականություն ստեղծող երկերի ուսուցումը……16
Գլուխ3.Գրականությունը՝ որպես հոգու նկարագիր
3.1. Հոգեկան կերտվածքը և խոսքը……...……...18
3.2. Նարեկացու հետ «հարցազրույցի» արդյունքու…….....20
3.3. Լսելով թումանյանական խոսքը՝ պարզ ու խոր…….....20
Գլուխ 4. Գրողը՝ գեղագիտական արժեք ստեղծող……22
Գլուխ 5. Ի՞նչ է ասում գրողը ժանրի ընտրությամբ……26
Գլուխ 6. Պատասխան գրողի ասելիքին
6.1. Սահյանական ընկալումներ կամ ժամանակի թևերին…….....28
6.2. Հրանտ Մաթևոսյան՝ իրականության ասացողը…….....29
6.3. Պարույր Սևակի սիրո անչափելի չափումը……..30
Գլուխ 7. Գրողին լսելուց հետո……..…….....32
Գլուխ 8. Գրողի հետ հարցազրույցի «ինչը»,«ինչպես»-ը,«ինչու»-ն….34
Եզրակացություն……38
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ……..39
Հավելված……41

Ներածություն

Ասում են՝ գրողը խոսում է աշխարհի, ինքն իր ու Աստծո հետ, իսկ աշխարհը ականջ է դնում, լսում նրա խոսքը, որ փնտրտուք է ու ելք, ոգեղեն ու իրական պատմություն, երազի և իրականության հանդիպում, հոգու սլացք, պայքարի կանչ ու կոչ, մշտամնա ասելիք, ճշմարտության ուղի և ուղենիշ: Գրքի ընթերցումը հանդիպում է գրողի հետ, մենք նրա զրուցակիցն ենք. մեր կյանքում հնչող հարց-հարցադրումների պատասխանն ենք փնտրում նրա խոսքում: Երբեմն այդ խոսքն է գտնում մեզ ու տանում իմացության, ճանաչողության, գեղարվեստի ընկալման ու գեղարվեստական արարումի ուղիներով:

Ո՞վ ենք մենք՝ հարցնում ենք մենք խոսք արարող արվեստագետին, և նա իր կյանքի, ստեղծագործական ներաշխարհից մեզ է նվիրում մեր իսկ ներաշխարհը հասկանալու բանալին: Ի՞նչ է կյանքը: Ապրել է պետք, սիրել է պետք, արարել է պետք՝ ազդարարում-լուսեղեն սիրով մրմնջում են բոլորը՝ Նարեկացին, Վարուժանը, Տերյանը, Ռաֆֆին, Բալզակն ու Անդերսենը… Ինչո՞վ է կյանքը գեղեցիկ. սա մեր հարցն է: Հեքիաթով՝ պատասխանում են Եսենինը, Մուրացանը, Իսահակյանը, Ֆրիկը (այո՛ այո՛, նույնիսկ Ֆրիկը)… բոլորը: Ո՞վ ես դու՝ հարցնում ենք: Ու հարցից առաջ հնչում է պատասխանը. նա, ով Արարչի շնորհով գուրգուրում է շնորհաբաշխ խոսքը՝ բանն Աստծո:

Գրողը մեր զրուցակիցն է, և խոսում է, երբ լսո՛ւմ ենք իրեն, երբ իր ասելիքը, ճշմարտությունը, ազնվությունը, լույսը, հոգու երգն ու ճախրանքը արժեքներ են մեզ համար, երբ արժեք է մեզ համար Խոսքը՝ աստվածային ճշմարտությամբ մերանված, աստվածային լույսով թրթռուն, մեղեդահունչ ու աշխարհաշեն, բարություն ու բարիք արարող խոսքը:

Անչափելի են այն տարածությունն ու ժամանակը, որոնցում թև է առնում գրողի խոսքը՝ որպես մեր սպասումների պատասխան, փնտրտուքների ելք: Այն կյանքի, իրականության, երազանքների ու նպատակների ուղիներ ու հանգրվաններ է ցույց տալիս, նվիրում, առաջարկում…

Գրականության դասը դառնում է հարցազրույց գրողի հետ, երբ ուսուցիչը «բռնում» է աշակերտի հոգու «ձեռքը» (այո՛, այո՛, հոգու), և միասին հարցեր են ուղղում Նարեկացուն, Մաթևոսյանին, Թումանյանին, Շնորհալուն… Երբ միասին ու միասնաբար լսում ենք նրանց պատասխանը որպես աստվածային շնորհի թրթիռներ, հայրենականչի հավատամք, ապրելու, սիրելու, արարելու բանաձև:

Գրականության դասը կարելի է կոչել գրողի հետ հարցազրույց:

Գեղարվեստական գրականությունը և՛ իրականության պատկերում է, և՛ հոգի ու հոգեբանություն: Ունի գեղագիտական արժեք, սովորեցնում է սիրել ու արարել, ճանաչել ու արժևորել: Գրականությունն ու գրականության դասը ունեն այդ առաքելությունը, որի մեջ առանձնահատում է ուսուցչի դերը: Նա է գրողին և աշակերտին «նստեցնում» սեղանի շուրջը և ժամանակի ու տարածության մեջ «կազմակերպում» նրանց հոգևոր հանդիպումը, նրանց «հարցազրույցը»:

Գրական երկի ու գրողի զրույցը աշակերտի (ընթերցողի) հետ այն ամենալուսավոր ուղին է, որ կոչված է մարդուն մարդ պահելու, և առավել կարևոր է մեր օրերում, երբ մարդը շատ է հեռացել բնական ու բարոյական արժեքներից, երբ հոգևին հաղորդակցվելը հետին պլան է մղվել: Խոսենք գրողների հետ, որպեսզի ինքներս մեզ հետ, աշխարհի, Աստծո ու մեզ նմանների՝ մարդ արարածի հետ կարողանանք խոսել սիրո, ապրումակցումի, բարության ու գեղեցիկի լեզվով:

Հետազոտության նպատակներն են՝

1. բացահայտել գրական խոսքի արժեքը,
2. ցույց տալ իմացականության դրսևորման առանձնահատկությունները գրական երկում,
3. ցույց տալ գրողի՝ զրուցակից լինելու անփոխարինելիությունը,
4. գտնել գրողին ճանաչելու ուղիներ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. բացել գրական ասելիքի շերտերը՝ գրողի հետ «զրուցելով»,
2. ցույց տալ ուսուցչի դերը գրող-աշակերտ երկխոսության մեջ,
3. ներկայացնել մեթոդներ, հնարներ՝ գրողի հետ հարցազրույցը կազմակերպելու համար:

Հետազոտական աշխատանքի մեթոդաբանությունը

Գրողների խոսքը ներկայացնել որպես աշխարհի հետ զրույցի հիմք՝ կարևորելով այդ երկխոսությունից բխող դասերը աշակերտի համար:

Առաջնային եմ համարել գրականության գեղարվեստական ու ճանաչողական արժեքը և գրողին լսելու, նրանից սովորելու համար գրական երկը որպես իրականության պատկերում ընկալելը: Աշխատել եմ ներկայացնել գրականության խոսքի ոլորտը, իրականության արտացոլման կերպերը, գրականությունը՝ որպես հոգու նկարագիր, գրողին՝ որպես գեղագիտական արժեք ստեղծողի: Կաևորել եմ նաև ժանրի ընտրությունը: Փորձել եմ մեկնաբանել շատ հեղինակների ընկալումներ՝ որպես մեր բազմաթիվ հարցերի պատասխաններ: Գրողներին «լսելուց» հետո իմ բանաստեղծական ընկալումները ևս դարձրել եմ նրանց հետ

զրույցի ու ապրումակցումի հիմք: Ձգտել եմ ներկայացնել գրողի հետ հարցազրույցի կարևորությունը, հիմնահարցերը, ձևերն ու պատճառները, այսպես ասած՝ «ի՞նչը», «ինչպե՞ս»-ը և «ինչու՞»-ն: Գրողի հետ հարցազրույցը ընդլայնում է մեր իմացականության, մտածողության, զգացմունքների աշխարհի, ինչպես նաև վերլուծելու, համադրելու կարողության սահմանները, դառնում է արժեքներ ունենալու և ստեղծարարության խթան ու արդյունարար ուղի:

Որպես հավելված՝ ներկայանում եմ Ալիսիա Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» ստեղծագործության ուսուցման դասի պլան և սահիկաշար՝ նկատի ունենալով այն, որ այս բանաստեղծությունը զրույց է Հայաստան երկրի հետ:

Հետազոտական աշխատանքս փորձել եմ տեսանելի և համառոտ պատկերել նաև սահիկահանդեսով:

Կից ներկայացնում եմ վերոնշյալ դասապլանը և սահիկաշարերը:

Գլուխ 1. Գեղարվեստական գրականությունը որպես իրականության պատկերում

1.1. Գրականության խոսքի ոլորտը

Աշխարհային ու վերերկրային ապրումների, հույսերի, զգացողությունների, հոգսերի, սերերի, արարումների ու սպասումների անսահման ընդգրկումը մարդկային մտածողության, գոյի ու կերպի շարունակական, հարափոփոխ ընկալում-արտահայտումն է որպես խոհ ու միտք, բառ ու բան: Երբ այդ խոհ-մտքերը, բառուբաները դառնում են գիր ու ծավալվում գեղարվեստի կանոններով, կոչվում են գեղարվեստական գրականություն:

Իրականությունը իր արտացոլքն է գտնում աշխարհճանաչողությունից ծնվող մտքերում, իրականության ու նրա ընկալման համադրումից ծնվում է աշխարհայացք, որով և մարդը նայում է իր «պատուհանից». գեղարվեստական գրականությունը ոսկեզօծում, հոգի է տալիս այդ «պատուհանին»: Իրականությունը ծավալվում է որպես ասելիք գեղարվեստական խոսքի ոլորտում: Գեղարվեստական գեղարվեստական գրականությունը, գեղեցիկի, վեհի, կատարյալի, բարու հունդերով ծոցվորած, խոսում է մեր ժամանակի ու մեզ հետ, դառնում է ուղի ու ուղենիշ: Կյանքն է գրականության նյութը: Իրականություն ասելով՝ չենք հասկանում միայն արտաքին աշխարհը իր բազմազան կապերով ու հարաբերություններով, այլ նաև ներքին աշխարհը, լույսի ու ստվերի գամման, որից իր և շրջապատի կյանքն ու ապրումներն է կերտում մարդ արարածը: Կյանքը լի է տարբեր ճշմարտություններով, և գրողի հավատամքն է այդ ճշմարտությունները դարձնել բոլորինը գրի ու մտքի, հույզի ու սրտի աչքերով: Գրականությունը՝ որպես իրականության արտահայտում, դառնում է (այդ է նրա կոչումը) զրույց մարդու հետ: Այն խոսք է մարդու մասին:Գրականության բովանդակությունը կարող է լինել անսահմանորեն տարբեր. մի դեպքում՝ բնության գովք, բնության մեջ որոնումներ, մյուս դեպքում՝տարաբնույթ խոհեր, սոցիալական, հասարակական, բարոյական խնդիրների արծարծում, մեկ առօրյայի սովորական թվացող արձանագրում, մեկ տիեզերահունչ խոհ-ապրումներ… Բոլոր դեպքերում կա մի եզր, որում առնչվում են բոլոր գրական երկերը. մարդու հարաբերությունը Աստծո հետ, ինքն իր հետ և ուրիշների: Ուրիշների աչքերով պիտի կարողանաս նայել ինքդ քեզ, ծավալել խոսքը որպես կյանքի պատում և ծավալվել որպես ճշմարտության «վավերագիր»:

Կյանք և գրականություն հարաբերությունը ունի և՛ մշտամնա, և՛

հարափոփոխ դրսևորումներ, որոնք կապված են սոցիալական, ազգային, հասարակական, բարոյական, գեղագիտական խնդիրների հետ: Այդ հարաբերությունը, ինչպես գրում է Դավիթ Գասպարյանը, «ամեն մի ժամանակի, իրականության ամեն մի փուլի համար ունի իր դրսևորման առանձնահատկությունները և, ըստ էության, պետք է ընկած լինի գրական բոլոր խոսակցությունների հիմքում, քանի որ դրա հետ է առնչվում գրականության հասարակական-քաղաքացիական հնչեղության և կենսունակության առաջնահերթ խնդիրը»[1]: Յուրաքանչյուր գրող ունի իր ճշմարտությունը, փնտրում է ասելիքի բովանդակություն և ձև՝ արտահայտելու իր ընկալումը աշխարհի և մարդու մասին, ունի ասելիք: Այլ հարց է, թե այդ ասելիքը որքանով է մեծ, հրատապ, լուրջ, խորը, տեղին, և որքանով է ստեղծագործող անհատը կարողանում ներկայացնել այն՝ գեղարվեստական խոսքի վերածած:

Ստեղծագործողի համար գերակա խնդիրը ներկայացնելը դառնում է հավատամք, ապրելու և արարելու հիմք: Գրականության դեպքում այն արտահայտվում է ուղիղ կամ միջնորդավորված, միանշանակ կամ տողատակ ենթադրող խոսքով: Եղիշե Չարենցի համար, օրինակ, կարևորը կյանքի թաքնված ահեղ ճշմարտության բացահայտումն է: Ակսել Բակունցի հերոսների համար համեմատության հիմք է բնությունը: Համո Սահյանի աշխարհում բնությունը տարրալուծված է մարդու մեջ, մարդը՝ բնության: Շիրազյան խոսքի նպատակը ժողովրդի ոգին է, խիղճն ու զգացմունքը: Փորձենք ճանաչել ու մեր սաներին չանաչել տալ գրի մշակների ճշմարտությունն ու այդ ճշմարտություն-իրականության բանալին:

1.2. Գրողին ճանաչելու ուղիներով

Եթե ընթերցողը, աշակերտը կարողանում են ճիշտ ընկալել աշխարհն ու մարդուն, ունենում են գեղագիտական ու բարոյական մաքուր չափանիշներ, հմտություններ՝ ընկալելու ուսումնասիրվող գրական երկի ասելիքն ու արժեքը, գեղարվեստականության և ճշմարտության մակարդակը, ապա նրանք կարող են ցանկացած գրական երկով ծավալել ու խորացնել իրենց մտավոր ու զգացմունքային աշխարհը, ունակ են մարդ մնալու, մարդ լինելու, լավ մարդ դառնալու:

Փորձենք ճանաչել ու ճանաչել տալ մի քանի գրողների՝ տողատակում «դուռ» բացելով ընդհանրապես ցանկացած գրողի ու գրական երկը արժևորելու համար:

[1] Դ. Գասպարյան, Ժամանակ և շարժում, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 100:

Նախ սկսենք մեր ասելիքի ձևակերպումից: Վերնագիրը պիտի լինի այն առաջին դուռը, որով մտնում ենք գրողի աշխարհը: Սկսենք:

Ժիրայր Ավետիսյանի ստեղծագործությանը անդրադառնալիս ընտրել եմ «Իր տողը կյանքում և հավերժի մեջ» վերնագիրը: «Սիմոն որդի Սիմոնի» վեպի ընթերցումը հեղինակի պատասխանն է մեր խոհերին: Պատասխան է ոչ միայն գրական երկը, այլ նաև նրա հեղինակը: Այսպես՝

Ժիրայր Ավետիսյան՝ արդարություն ու սեր փնտրելու գնացած հեղինակ, որ հրամայում-աղաչում է, որ մարդը ճանաչի մարդուն և չմարդուն, մա՛րդ մնա, մա՛րդ դառնա, հանդգնի-համարձակվի չվախենալ նազարներից, նազարապաշտ կեղծիք-քծնանքով սողացողներից, անուն ունենա և ոչ թե համար: Վեպում իրականությունը հաճախ գաղտնագիր է, ճշմարտության առակախոս պատկեր: Հեքիաթ կոչված այս վեպում ամենադաժան իրականության նկարագիրն է, որում աստիճանաբար հակադրվում են ողբերգականը, սերն ու պայքարը:

«Լույսն ու խավարը» վերնագրով անդրադառնանք Շիրվանզադեի «Քաոս» վեպին: Սկզբում ձևակերպում ենք այն միտք-իրավիճակը, որին պիտի բախվենք, և աշխատում գտնել գրողի մատնանշած ուղին: Աշխարհի բազում անկյուններում բախվում են կրքեր ու շահեր: Եվ թանձրանում է այն մառախուղը, որ մարդն է կապում իր իսկ գոյության գլխավերևում: Խոսում ենք կյանքում եղած մոլեգին ալիքների մասին, որ կարող են շատերին նավաբեկյալ դարձնել: Կարևորում ենք հույսը չկորցնելը, մաքառելը: Հետո անցում ենք կատարում Շիրվանզադեի վեպի գաղափարին, բովանդակությանը, կառուցվածքին, փորձում միասին գտնել նրա հասարակական արժեքն ու գեղարվեստականության կերպը՝ լսելով հեղինակի պատասխանը մեր հարցադրումներին: Ոչ միայն գրողի, այլ նաև մեր ասելիքը՝ նրա ստեղծագործությունից բխող, պիտի ունենա եզրահանգում, որ միտված լինի դաստիարակչական, հասարակական, քաղաքական, գեղագիտական, բարոյական, սոցիալական, ազգային խնդիրների լուծումներ ուղենշելու կամ ուրվագծելու: Այս դեպքում ձևակերպենք այսպես. քաոսից, խառնաշփոթությունից պիտի ծնվի կարգ, պիտի լույս ծնվի, մրից ու ծխից՝ կրակ, ինչպես Միքայելի հոգում է ծնվում, ինչպես լույս է ծնվում այն նավթից, որ երկրի ընդերքից հանում են մարդիկ, բարի, ուժեղ ու անպաշտպան մարդիկ, որոնց կողմն է գրողի համակրանքը, մարդկանց ջերմությունն և Աստծո արդարությունը, որ չխամրող հույս է ու անսասան հավատ:

Գուրգեն Մահարու ստեղծագործությանը անդրադառնալիս մեր բանավոր ու գրավոր խոհերը ձևակերպենք «Տառապանքին հանդիման» վերնագրով՝ փորձելով ներկայացնել գրողին որպես մահին ու ցավին հաղթած, նրանց երեսին ծիծաղող

մարդու, հայի, ստեղծագործողի: Աշխատենք նրա ինքնակենսագրական պատկերները ընկալել որպես ցավ ու մորմոք, արցունք ու ճիչ, միաժամանակ՝ որպես լույս ու մեղեդի, տեսնենք Մահարու արցունքի ծիծաղը: Տանենք աշակերտին իրականության և գեղարվեստի ուղիներով և տեսնել, զգալ ու ապրել տանք գրողական իրականությունը: Ուսուցչի խնդիրը պիտի լինի օգնել աշակերտին, որ նրան հարազատ լինեն գրողի գեղարվեստական իրականությունն ու հավատամքը: Մահարին սովորողին պիտի ներկայանա որպես լույսի ջատագով, վերջինս պիտի տեսնի, որ հեղինակը վերակերտում է, ստեղծում իր հոգու դրախտն ու այգեստանը, ուր էլ տանում է նաև ընթերցողին: Օգնենք աշակերտին, որ նա հասնի տեղին ու գեղարվեստաշունչ եզրահանգումների, ինչպես՝ Մահարին ծիծաղում է իր իսկ նկարագրած դժոխքի վրա, ծիծաղում է ցավին հանդիման, հաղթում է տառապանքին, հաստատում է կյանքը՝ փոխարենը հատուցելով իր՝ բանաստեղծի ճակատագրով:

1.3. Խոսքի հրաշքը

Խոսքի հրաշքը, գեղարվեստական խոսքի հրաշքը, որ իրենով մերանում է իրականությունն ու աշխարհը, բոլորի հոգում արթնացնում կամ գոնե արթնացնել ուզում բանաստեղծին, արարողին, հուսացողին:

Իսկ ժողովուրդը իմաստուն է: Նա ծնում է իր բանաստեղծին: Իր հերոսին, իր զորավարին, նկարչին, գիտունին, իր ռամիկ իմաստունին, ազնիվ երազողին, որ դարձյալ ու դարձյալ իմաստության ու լույսի կրողներ են, առաջնորդներ, հավատավորներ, միամիտներ, լույսի ճամփորդներ, ժողովրդի ոգու խարիսխն ու կորիզը: Ժողովուրդը իմաստուն է, և իմաստունների իմաստուններ են նրա մեծագույն զավակները, իմաստուն են ու խև, իմաստուն են և ոչ պատեհապաշտ, իմաստուն, բայց և խենթ ու խելառ: Ազնիվ՝ միամտության չափ, նվիրյալ՝ անձնազոհության աստիճանի: Նրանք Մինասներ են ու Պարույրներ, Անդրանիկներ ու Նարեկացիներ, Նժդեհներ ու Չարենցներ… Միշտ մեծատառ, հոգնակիության խորքում՝ դարձյալ մեծատառ: Առաջնորդ ու զոհ, ռահվիրա ու ճորտ, ճորտ արդարության, նվիրումի, լույսի, բարության… Եվ դրանով՝ տեր, և դրանով՝ անկրկնելի, անզուգական, բայց և նման, նման տաղանդով, ներքնահաշտ խռովկանությամբ: Իրականությունը լցնող անհատներ են նրանք, որ և՛ ստեղծագործող են, և՛ ստեղծագործության հերոս: Հերոս մի մեծ գրքի, որի հեղինակը մեր ժողովուրդն է, բառ ու բանի արարումը ժառանգած հայ մարդու

հավաքական ինքնությունը: Աշխարհը մերժող, աշխարհին սիրահարված Իսահակյաններ են նրանք, իրենք իրենց ու բնության մեջ ամփոփված Սահյաններ, շռայլությունը՝ որպես ալվան ծաղիկ-պտղունց արյուն, աշխարհի գույներին պարզած, աշխարհի գույն դարձրած, աշխարհի գույները հարստացնող Մարտիրոս Սարյաններ: Ու նաև համբերանքի չիբուխի հետ լուռ մտորող Դիլաններ ու Սիմոններ, աշնան արևով տաքացող, կուցումած ձեռքերով կյանք ու օջախ շյուղ ոռ շյուղ հյուսող ծիծեռնակ-Աղուններ, քիլ առ քիլ կորեկի արտ կամ քարաճեղքից խոտ հնձող հնձվոր-Պավլեներ են նրանք: Իմ ու քո Հայաստան աշխարհի աղն ու ցավատերն են բոլորը այսօր, երեկ ու վաղը, հույսի նավն են, արմատ-խարիսխը: Արարումի հևքն են, հենքն ու պատմությունը: Սահյանական ժայռը, նարեկյան հոգեթռիչ-տիեզերաթռիչ տառապանքն ու արարչաընծա փրկության շողն են, սևակյան ընդվզումը, Տերյանի հաշտ հրաժեշտը չար ու բարիներին, չարենցյան համասփյուռ ներումը, թումանյանական խոսքի անսահմանությունը, զոհրապյան հավատավոր արդարամտությունը, Ռուբեն Սևակի ասպետորեն վեհ սերն ու ազնվությունը… Մեր խոսք ու խոհի ծնունդն են նաև մեր հերոսները՝ հայտնի, անանուն, հերոսներ մտքի, երգի, սպասման: Սայաթնովյան սերն ու ընդվզումը աշխարհովի են իմ մի բուռ-անսահման երկիր աշխարհում: Հերոսականության վեպը միայն Դավթինը չէ. քաջ տղերքինն է քաջ Տիգրանից մինչև այս պահի ժպիտն օրոցքի:

Խոսքի հրաշքը… Երգի, սպասման, արարումների խինդը մշտավառ, դժվարագնա այն ճանապարհը, որ տանում է վեր քարքարոտ ուղով, ժողովրդաշեն այն պատմությունն է, որ կերտվում է միշտ բրիչով, ձեռքով, խոփով, գրիչով: Աշխարհից, կյանքից խոսքն է արարվում, իսկ խոսքից՝ արդեն մի ուրիշ աշխարհ; Թե՞ գուցե նույնը:

Գեղարվեստական գրականությունը իրականությունից է առնում իր լույսը և իր շողերով լույս տալիս կյանքին; կյանքն ու իրականությունը մի չափումում նույնանում են այնքանով, որքանով կյանքի գույներով է լցվում գեղարվեստական խոսքը և դառնում իրականության ստեղծագործ արարում՝ իրենով պայմանավորելով մտքեր, գաղափարներ, ասելիք, զգացումներ, դառնում անցյալից ապագա գնացող հավերժական ներկա:

Գլուխ 2. Իրականության արտացոլման տարբեր կերպերը գրականության դասին

Եթե հարցնենք որևէ հեղինակի, թե որն է իրականության պատկերման իր հայեցակետը, նա ի՞նչ կպատասխանի: Կխոսի իր գրական հայացքների, դավանած ուղղության, ժամանակի ու մտածողության ընկալումների մասին, տեած ու լսածի, ապրածի, զգացածի ու սովորեցրածի մասին: Բայց ամենից շատ՝ թերևս սպասումների: «Էն չքնաղ երկրի կարոտը անքուն» կանչում է անդադար Թումանյանին, Վարուժանը հայացքը կհառի «ոսկուն» արտերին, բայց ոգելով խրոխտ կարտասանի «Ձոնը», Մեծարենցը, հոգու ափի մեջ ակացիայի ծաղկաթերթիկներ լցրած, կսպասի միայնակ ճամփորդին…

Գրականությունը մենք ընկալում ենք որպես իրականության, պայմանականության, խորհրդանիշների, հորինվածքի շաղախ, որ կենդանի է ոգով; Սակայն հեղինակի մտադրման, տաղանդի, գրական որևէ ուղղության պատկանելու, ժանրայի ընտրության հետ՝ տարբեր են այդ հորինվածքների «չափաբաժինները», մեկի կամ մյուսի բացարձակ գերակշռությունը կամ նույնիսկ բացակայությունը: Կա այսպես կոչված ռեալ, իրական իրականություն, որն իր արտահայտությունն է գտնում, օրինակ, ինքնակենսագրական բնույթի ստեղծագործություններում, տեսանելի չափով՝ պատմավեպերում: Ուսուցիչը կերպարների միջոցով, դեպքերի շարադրանքով աշակերտին պիտի ուղղորդի, որ նա տեսնի իրականության գծերը՝ պատմական ժամանակը, սոցիալական ու քաղաքական վիճակը, հերոսների իրական լինելը, պատմավեպի դեպքում՝ իրականի և հորինվածքի «ջրբաժանը»: Կա իրականություն և իրականությանը հարազատ հորինվածք. դա ևս տեսնել ու ճանաչել է պետք: Այս առումով կարելի է օրինակ բերելԴեմիրճյանի «Վարդանանք»-ը և Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» պատմությունը: Սովորողը ուսուցչի օգնությամբ բացում է պատմության և ստեղծագործության շերտերը, ցույց տալիս վերջինիս՝ իրականությամբ պայմանավորված գծերը: Այսպես՝ հերոսը հագնվում է տվյալ ժամանակին, իր սոցիալական ծագմանն ու դիրքին, ունեցածին ու բնավորությանը, իրավիճակին համապատասխան: Կարելի անվերջ շարունակել օրինակները, գտնել նրբերանգներ, տեսնել ու զգալ ժամանակի շունչը, ասելիքի նպատակադրումը և ոճը: Հորինված իրականությունը առավել գեղարվեստականությամբ է օժտված: Հորինված իրականությունը ներկայանուն է

տարբեր անուններով ու նրբագծերով: Այդ իրականությունը առավել տարրալուծված է հետևյալ դրսևորումներում.

1. Հեքիաթների պայմանական իրականություն
2. Առասպելների պայմանական իրականություն
3. Երազի իրականություն՝ արտացոլված բանաստեղծություններում
4. Կարոտի իրականություն

2.1. Հեքիաթների և առասպելների պայմանական իրականությունը

Հոգնել եմ՝ ասում ենք մենք, թող միշտ բարին հաղթի, մաքրության կարկաչ որտե՞ղ գտնենք: Հեքիաթում՝ ասում է մեր սիրտը, հեքիաթում՝ ասում են հեքիաթի մաքրություն հոգում անթեղած հեքիաթագիրները:

Հեքիաթներ, լույս են նրանք, լույս ու մութի աշխարհների ճամփաբաժնից վեր սլացած մաքրության ու երազանքի շողեր՝ միահյուսված իրականության թրթիռներին: Իրականությունը այս դեպքում կյանք կոչվող հավատավոր հեքիաթի հաստատումն է. բարին միշտ հաղթում է չարին, ճշմարտությունը հաղթանակում է, ոսկի է սերը, ոսկի է հույսը, ոսկի է երգը: Եվ անմահությունը՝ որպես հավերժական իրականություն, մեզ է նայում հեքիաթի աչքերից: Հեքիաթին հավատալը դառնում է իրականությանը լուսավոր աչքերով նայելու հավատաշող հայացք:

Կարդանք ու կարդալ տանք մեր սաներին հեքիաթներ, ժողովրդական, Թումանյանի, Աղայանի, Անդերսենի, Գրիմ եղբայրների հեքիաթները, և նրանց անմահական ցորեն-հունդով, անմահական ջրով ու Հազարան հավքով լուսավորենք մեր և ուրիշների, աշխարհի, կյանքի գույները: Մեծ ձեռքբերում կլինի, եթե աշակերտը հայտնաբերի, որ Աղայանը հեքիաթներից եկած ծերունի է, զգա «Անահիտ» հեքիաթի ճշմարտության և երազանքի անարատ հրճվանքը: Եթե ումանյանական «ոսկի քաղաքն» ու «ոսկու կարասը» լուսավորեն նրա ուղին: Եթե կարողանա անդերսենյան եղևնու տխուր ու պայծառ զգացողություններով ապրել, սոխակի երգով ու բարի լույսով լցնել աշխարհը: Ձրահարսի սիրով սիրել, սպասել ու թախծել: Հեքիաթի մեջ իրականություն են երկնքից թափվող աստղային թալերները՝ որպես բարության փոխհատուցում, կռնատ աղջկա աճող ձեռքերը, Հենզելի ու Գրետելի, Մոխրոտի՝ լուսավոր կյանքի հասնելը:

Հեքիաթը նաև ճշմարտություն է, ուղենիշ, խոսք ու խրատ, լույս ու սեր: Կարդանք, որ չտեսնենք թագավորի նոր «զգեստը», հավատացած լինենք, որ ինչքն

էլ դևերը փախցնեն Անտես-Աննմաններին, կան արքայազներ, որ փրկելու են նրանց: Ապրենք իմաստությամբ ու փոխանցենք սերնդեսերունդ: Հեքիաթը նաև քաջության գովք է. հիշենք մի փոքր հեքիաթի իմաստությունը («Պռոշ թագավորի փոքր տղան»). «Կռվի ժամանակ մարդուն ամենից առաջ ի՞նչ է պետք:

- Ամենից առաջ քաջություն է պետք,- ասում է տղան»[2]:

Ղազարոս Աղայանի հեքիաթներով հատկապես կարելի է ազգ ու սերունդ դաստիարակել, կարողանանք մեր աշակերտներին լսելի ու սիրելի դարձնել Գյուլնազ տատի ձայնը, ավանդությունը, պատմությունը, բարությունն ու մաքրությունը, հայկականությունը դրոշմենք մեր հոգու ունկերին նաև հեքիաթի լեզվով. «Արևը նոր էր դուրս եկել ու իր բարի լույսը տվել Մասիս սարին»[3]: Կամ՝ «…Մեր սիրելի Արևամանուկը Արևամանյակ նահապետի որդին էր»[4]:

Հավատավոր մաքրությունն է հնչում որպես իրական հեքիաթ. «Այո, մի ժամանակ երկինքը մոտիկ էր երկրից,- շարունակեց տատիկը:- Երկնքից լսվում էր Աստծու ձայնը: Նա այնտեղից խոսում էր մարդկանց հետ….

Ուղիղ կես գիշերին լսվում էին հրեշտակների քաղցր մեղեդիքը»[5]: Ինչպիսի՞ն է առասպելների հորինվածքը: Այս դեպքում մեր ժողովրդին հարցնենք. չէ՞ որ նա է հեղինակը: Ժողովուրդը կպատասխանի, որ թեև առասպելը իր մտքի ու երևակայության ծնունդն է, սակայն լուսաշող ու ճշմարիտ է նրանց իրականությունը: Առասպելներում պատումը հանդես է գալիս որպես պայմանական իրականություն: Հորինված են դեպքերն ու դեմքերը, ճշմարտապատում են գաղափարները, զգացմունքները… Ժողովուրդը հավատացել է իր հորինածին, մեզ համար արժեքավոր է այդ հորինվածքին ուղղված զուլալ հայացքը, որով փառաբանվել ենքաջությունը, անձնազոհությունը, վեհությունը, հայրենասիրությունը… Վիպերգերը ևս ունեցել են առասպելական երանգներ. Աժդահակի ուսերին օձեր են աճում, քաջքերը բանտել են Արտավազդին… Գրականության ուսուցիչը օգնում է աշակերտին՝ տեսնելու իրականության և առասպելի սահմանն ու նրանց միավորող գեղարվեստական մտածողությունը: Այսպես՝ խոսելով «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգի մասին, ինչպես իրավացիորեն նշում է Լևոն Միրիջանյանը, չպիտի Արային և Շամիրամին աստվածներ համարենք (հետևաբար՝ հորինվածք)[6]: Եթե հնագույն պատմությունը վերածվել է գրականության, չի նշանակում, որ առասպել է:

---

[2] Հայկական ժողովրդական հեքիաթներ, Մաս 2, ՄՀՄ գրատուն, Երևան, 2015, էջ 246:
[3] Ղ. Աղայան, Հեքիաթներ, «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 2004, էջ 199:
[4] Նույն տեղում, էջ 202:
[5] Նույն տեղում, էջ 220:
[6] Տե՛ս Լ. Միրիջանյան, Պատմության և առասպելի սահմանները, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1986, էջ 62:

2.2.Բանաստեղծություններում կարոտի իրականության ընկալումը

Առավելապես բանաստեղծներն են մեզ հետ խոսում երազի իրականությունից: Բանաստեղծական աշխարհը իր մեջ ներառում է իրականության և երազի ոգեղեն «համաձուլվածքը», և երազի իրականությունը՝ որպես հոգու պատում, երբեմն դառնում է գերիշխող: Ծավալվում են գույներ, լույսեր, մեղեդիներ՝ խոհի բեռը շալակած, ինչպես Համո Սահյանի երգում, մութի մեջ լուսե թևերը տարածած, ինչպես մեծարենցյան կանչ-բաղձանքներում:

Խոսենք Մեծարենցի ու Սայաթ-Նովայի երազի իրականության դրսևորումների մասին: Լսենք նրանց բանաստեղծական երազի պատումը:

Մեծարենցյան նվագներով լցնենք մեր հոգիները: Ծաղիկներից հուշիկ թերթեր է թափում «բուրումներով օծուն հովիկն իրիկվան»: Ու սադափե մթնշաղի մեջ լույս կա ու քնքշանք, մութի մեջ լույսի թևերն է Մեծարենցի սիրակարոտ ու սիրալեցուն հոգին: Մաքրությամբ ու սիրով լեցուն հոգին մութ աշխարհում լույս է տեսնում, լույսով ապրում և լույս երազում: Սիրով է գինով բանաստեղծի հոգին, որ լուսեղեն ճամփի ուղևոր է: Համբույրը սիրո մաքրության ու ոգեղենության այսաշխարհային կնիքն է, բանաստեղծի խոստովանանքի ճիչը: Լույս հրճվանքն ու պայծառ տրտմությունը գիրկընդխառն խոսում են Մեծարենցի բառերով և նրա հոգու կանչ-թրթիռը հաղորդում աշխարհին: Կարոտի նավակներն ու սպասումի մեղուները որպես դեսպան ու պատվիրակ հղվում են աշխարհին, մարդկանց, բնությանը, տիեզերքին ու… չեն վերադառնում: Եվ բաղձանքով ակաղձուն նավակներն ու տարագնացիկ մեղուները մնում են կարոտի հեռավոր ափերին. հույսի նեկտարը չի դառնում փեթակված մեղր: Ու մեղմ թախիծով և անսահման մարդկայնությամբ տրոփում է բանաստեղծի սիրտը, որ կարոտ է լույս ու արևի, նվիրում-սիրո: Ու ինքն իրենից հասուն ու զուլալ պատանին աղոթք-աղերսանքով մրմնջում-ճչում է՝ «Տու՛ր ինձի, Տե՛ր, ուրախություն անանձնական»:

Սա է Մեծարենցը՝ պարզ ու մանուկ, մեծ ու հասարակ, սիրով ու տառապանքով լեցուն և իր տառապանքից սեր մակարդած աշխարհի համար, դարձած անմահության ու հավերժի շող, «իրիկուն» ու «խրճիթ», սիրո լույս ու նվիրումի իրական հասցե, ոգին նյութացած: Այնքան ոգեղեն, որ թվում է՝ իրիկվա շոյանքն ու խրճիթի տաք գգվանքն անգամ մեծարենցյան սիրո մեղմահունչ լույսով են օծուն, և Մեծարենցը որպես տաք լույս ապրում է ամեն գգվանքի, բարության, տաք խոսքի ու օջախի մեջ:

Երազի և իրականության բազմալար առնչությունների մասին է սիրո նվիրյալ Սայաթ-Նովայի երգը: Ուսուցիչը կարող է աշակերտներին տանել նրա երգի ափը:

Երգը հոգուց է ծնվում, դառնում տիեզերահունչ ու տիեզերաթրթիռ զգացումների թարգմանը, նայում հոգու աչքերից, լցվում հոգու ունկերի մեջ ու ծավալվում, ծավալվու՛մ որպես լույսի բերկրանք, սիրո ավետիս, երազների վարդաշող գգվանք: Սայաթ-Նովայի երգը՝ սիրո համասփյուռ պայծառությամբ թաթախուն, կարոտի վեհատեսիլ ու գգվանուտ շողերով լեցուն: Հոգեթրթիռ երգը, սիրավառ երգը, սիրո հավատամքն ու երդումը, սրտի հեքիաթական բանալին: Բառե՛րը… սեր են շնչում, սիրով են շնչում, հավիտենության երգ են բառերը.

Աշխարքը ծով, դուն մեջը նավ…

Լույսի շղարշ են բառերը.

Պատկիրքըդ ղալամով քաշած…

Սպասումի վայելք են բառերը.

Քանի վուր ջան իմ, յա՛ր, քի ղուրբան իմ...

Սերը բալասան է, կարոտ սրտի պապակ փափագ: Աշխարհն ու տիեզերքը բեկվում են սիրո անչափելի երկնակամարում: Ո՞վ է Սայաթ-Նովան: Ամուր են ինքը, հավատքը, արդարության ղգացումն ու խոսքը: Բանաձևի ուժով պրկված տողերից վեր, սիրո ծովի լույս հավերժության ալիքների վրա պայծառ լողում է բանաստեղծի, մեր, մեր ժողովրդի, մարդ արարածի սիրո նավը՝ ի հեճուկս մահվան, կորուստների, դավերի ու ցավերի: Սերն Աստված է, Աստված սեր է: Սիրո լույսերի շողաբերն է Սայաթ-Նովան:

Ուսուցիչը աշակերտին պիտի սովորեցնի կարդալ բանաստեղծի հոգին: Դրան օգնում է բանաստեղծի, աշակերտի, ուսուցչի բանաստեղծական ընկալումների համադրումը: Ասմունքի, մեկնաբանությունների, վերլուծությունների, տեքստային աշխատանքի, համագործակցության արդյունքում խորանում է աշակերտի ներհայեցողությունը, և նա ուսուցչի օգնությամբ գտնում է բանաստեղծին, նրա ու իր ասելիքի առնչությունները, իրենը դարձնում գեղարվեստականությունից ու գաղափարից բխող արժեքները: Այս դեպքում է, որ աշակերտը ի վիճակի է տեսնելու երազի և իրականության համադրումը բանաստեղծի խոսքում: Խոսքը երազի՝ որպես ձգտումների, կատարելության, սիրո, ազատաբաղձության համաձույլ ոգու մասին է, ոչ թե երազի և իրականության համապատասխանության: Երազի իրականությունը բանաստեղծի հոգևոր հարստության գեղարվեստական ապրում-խոսքն է: Ապրումները, սպասումները իրական են, ինչպես ծառը, ծաղիկը,

աշխարհը, գուցեև առավել իրական, քանի որ հավերժաթրթիռ են՝ որպես հավերժի ու արարումի շողեր:

2.3. Կարոտի իրականություն ստեղծող երկերի ուսուցումը

Խոսենք կարոտի իրականության մասին: Խոսքը այն ստեղծագործությունների մասին է հատկապես, որոնք առաջին հայացքից թվում են ուղղակի փաստագրություն, հեռու չեն իրականությունից, ինքնակենսագրական շերտեր ունեն (ինչպես Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը) կամ ինքնակենսագրության հետ սերտ առնչություններ (Համաստեղի պատմվածքների օրինակը):

Կա ու չկա այն աշխարհը, որ կերտում են այս գրողները: Իրական է այդ աշխարհը, միաժամանակ կարոտի շողերով պարուրված: Չկա-ն Մահարին, Համաստեղը դարձնում են կա և կերտում իրենց ու մեր Վանը, իրենց ու մեր Արմտանը… Ու տեսլանում, վերստեղծվում է խոսքի ու կարոտի հրաշքով մի նոր իրականություն, որը աղարտել, այրել, փոշիներով ծածկել հնարավոր չէ, քանի որ ապրում է խոսքի, հոգու ու կարոտի մեջ: Այդ իրականությունը ես կանվանեմ կարոտի իրականություն: Գրականության դասը հնարավորություն պիտի տա աշակերտին՝ տեսնելու այդ իրականությունը ևս: Առավել լավ տեսնելու համար նա պիտի կարդա ստեղծագործությունը, ընկալի խաչվող հասկացությունների հետ նրա կապը, և սեփական ըմբռնումները աշակերտին կտանեն գրականություն-իրականություն, գրականություն-հորինվածք միասնությունները համադրելու և իր հոգու մեջ վերաստեղծելու ուղիով:

Կարոտի իրականության ծալքերն ու ելևէջները աշակերտներին կարող ենք հասցնել, տեսանելի դարձնել Մահարու «Այրվող այգեստաններ» վեպին ուղղված մեր հայացք-զգացումներով, խոհ-ապրումներով: Հեռու, իրական մի պատում է այս վեպը՝ լեցուն այգեստանների բույրերով: Քամին ծովից է փչում, երբ իրիկուն է, իսկ երբ գիշեր է՝ սարից:Փչում է քամին, և ծալ-ծալ բացվում են հիշողության երբեք չխամրող ծալքերը: Մահարին մեզ տանում է Վան, որտեղից, թվում է, երբեք չի հեռացել ո՛չ ինքը, ո՛չ էլ ուրիշ վանեցի: Ծփում ու բուրում են այգեստանները, և այրվող այգեստանների շղարշից անդին՝ հեքիաթի պես իրական կյանքի խորքում, ապրում է Վանը: Ծանր է Մահարու խոսքը, ծանր է ու թեթև. «-Իսոր գինն ի՞նչ ի, տատմեր Թառիկ….»[7]: Նորածնի ճիչը գալիս է լցնելու մի կտոր այգեստան: Եվ Մահարին մեզ տանում է Օհանես աղայի տուն՝ որպես խոսքի, խոհի, հայ կեցության վանահիմն մի

[7] Գ. Մահարի, Այրվող այգեստաններ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1966, էջ 7:

«տանտուն»՝ օջախ: Խոսքերը՝ պարզ, սրտաբաց, «խորոտ», իմաստուն, սրամիտ. «-Թոռան տեր ես էլե, Է՛… էս որ կա՝ տակի քրթուցքն ի, կաթի մեկ սերն ի անուշ, մեկ էլ քրթուցք. էլ չկա՛, մարե»[8]: Մահարու պատումը. մի ողջ Հայաստան: Մահարու բառերը, ոճը, մի երկու տողի մեջ՝ ամեն ինչ՝ կյանք, լույս ու խավար, հոգս ու երջանկություն… Բառը մանրամասների բանալին է: Վեպում մոռանում ես իրականության ու հորինվածքի, երազի և իրականության սահմանները: Աշակերտները կյանքի զարկերակն են զգում՝ ժամանակի և տարածության, կայունության և փոփոխության ընկալումներից ելնելով: Կար Վանը, հիմա չկա, կար Վանը ու էլի կա: Այս հակադրամիասնությունը դառնում է այն «կողպեքը», որ աշակերտները բացում են ուսուցչի օգնությամբ և հայտնվում հեղինակի կարոտի իրականության անսահման ընդգրկումում: Այնքան իրական են հերոսները, որ նույնիսկ չես էլ կասկածում, որ հեղինակը կարող է տեսնել անգամ նրանց երազները, մտքերը: Վանը Ագռավաքարի պես դառնում է խորհրդանիշ: Եվ հետո բացվում է երազի ու կարոտի իրականության մեջ: Կենդանանում է Վանը բանաստեղծի հոգու և հայ ժողովրդի սպասումների աշխարհում՝ որպես քարացած քաղաք, որին (երազում) անմահական ջուր են ցողել, և անցյալից ներկայի ու ներկայից անցյալի հետ զրուցում են վանեցիները՝ կարոտի իրականության մշտամնա բնակիչները:

[8] Նույն տեղում, էջ 13:

Գլուխ 3. Գրականությունը որպես հոգու նկարագիր

3.1. Հոգեկան կերտվածքը և խոսքը

Ի՞նչ է գրականությունը. զրույց աշխարհի հետ, խոսք ու խոհ, որում միատեղվում են հոգեկան բազում որակներ, կերտվածքներ: Հորինվածք, որ նույնքան իրական է, որքան աշխարհին նայելու մարդկային հայեցողությունը: Գրողը թղթին է հանձնում իր, իր ազգակիցների, մարդու խոհերը, զգացողությունները, բացում է հոգու շերտերը, ներկայացնում մղումների հոգեբանությունը, պատճառները, հետևանքները, կարդում ու ընթերցողի առաջ է դնում մի բաց գիրք, որի անունն է ներքին մարդ: Բազմազան են մարդու հոգեկան կերտվածքի կերպերն ու դրսևորումները, և գրողին Արարչից տրված է տեսնելու այդ տիեղերքի բազմատեսակ ծալքեր: Այդ է իսկական արվեստագետ գրողի կոչումը: Գեղարվեստական երկը ընկալել-արժևորելը հոգու բազմաշերտ ծալքերի բացում-բացահայտում է պահանջում ընթերցողից (իր, ժողովրդի, գրողի, նրա հերոսների…): Այն կարող է տարբեր լինել այնքանով, որքանով ընթերցողը ունակ է ճանաչելու աշխարհը, հասու լինելու հեղինակի ասելիքին, կարևորելու այն: Երկի ըմբռնում-գնահատումը կարելի է համեմատել ծարավ լինելու չափից կախված՝ այն հագեցնելու հետ: Յուրաքանչյուր մարդ գրական երկը դարձնում է «իրենը»՝ իր հայացքին, իմացությանը, նույնիսկ տվյալ պահի հոգեվիճակին ու տրամադրությանը համապատասխան: Գրականության ուսուցչի խնդիրն է ուղղորդել աշակերտին, մատնանշել հարցեր ու հեղինակային յուրահատուկ ասելիք, օգնել թափանցելու երկի շերտերի մեջ, գտնել կարևորը:

Ժամանակի հետ փոխվում է գրական երկի հանդեպ մեր հայացքը, ծնվում են նորանոր հայեցակետեր, փոխվում է մարդկանց հոգեբանությունը, անցյալում կարևոր եղող կամ թվացող շատ արժեքներ փոխում են իրենց կարևորության չափը: Կարծում են՝ այդ հաշվի առնելով է Դ. Գասպարյանը գրում. «Մեր ապրած ժամանակի և իրականության կենսական հարստության հայտնաբերման, որի տրամաբանական շարունակությամբ՝ նաև կյանքի գեղարվեստական ճշմարտության բացահայտման հարցը առնչվում է այսօրվա մարդու հոգեկան կերտվածքի ու բարոյական նկարագրի, նրա ապրած վիճակների ու հարաբերությունների, ձգտումների ու որոնումների, կյանքի գնահատման ու իմաստավորման սկզբունքների, խոհերի ու հույզերի, արտաքին պահվածքի ու

ներքին մենախոսությունների բարդ ու բազմաշերտ համակցությանը»[9]: Իհարկե, շատ մեծ է ժամանակի գործոնը, սակայն գրողը, ստեղծագործությունը (նաև գրականության ուսուցիչը) պիտի օգնեն, որ չինանան և չխեղաթյուրվեն իրական արժեքները, և մարդկային հոգին կարողանա հոգևոր սնունդ քաղել գրական երկից:

Չափազանց տարողունակ է գրական երկի տարածությունը: Սևակյան հայտնի միտքը, որով բանաստեղծը փառք է տալիս կարդացածը հասկացողին, կարող ենք հասկանալ որպես սեփական աշխարհն ու հայացքը գրական երկ տանելու և նրան ձուլելու կարողություն-կարևորություն: Երկը պիտի ունենա ազատ տարածություն, որ այնտեղ մի քիչ (երբեմն և շատ) արարի նաև ընթերցողը: Նա իր զգացողությունները, հույզերը, երևակայությունը, կյանքի ճանաչողությունը ձուլում է երկին և ստանում, այսպես ասած, «իր» բանաստեղծությունը, պատմվածքը, վեպը… Գեղարվեստական երկի ընկալման հոգեբանության մասին խոսելով՝ Զ. Ավետիսյանը գրում է. «Ենթատեքստային ազատության գաղտնիքը նրանում է, որ հեղինակը երկի ստեղծման ընթացքում ընտրում և ընդգծում է գեղարվեստական իրադրությունների ու հոգեվիճակների ամենահիմնական գծերը, որոնք կարող են դառնալ մեռած գրանցումներ, եթե ընթերցողը իր երևակայությամբ չլրացնի, կենդանություն չտա վերջիններիս»[10]: Գեղարվեստական բարձրարժեք երկերում ավելի տարողունակ է այդ տարածությունը:

Հեղինակները տարբեր չափով են անդրադառնում իրենց հերոսների հոգեբանությանը: Կան գրողներ, որոնք մանրամասն քննության են ենթարկում, ինչպես Նար-Դոսը «Սպանված աղավի» վիպակում, Հրանտ Մաթևոսյանը «Աշնան արև» վիպակում: Կան գրողներ, որոնց ստեղծած դիմանկարները ինքնին խոսուն են, ինչպես Դեմիրճյանի «Վարդանանք», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպերում: Գրական կերպարի հոգեբանությունը օգնում է ընկալելու-արժևորելու երկի գաղափարը, ասելիքը, գեղարվեստականությունը:

Գրական երկերը տարբեր չափով կրում են նաև սոցիալական, ազգային հոգեբանության կնիք: Գրողը մեզ ներկայանում է որպես հոգեբան, մենք էլ պիտի կարողանանք ճանաչել նրա հոգին, նրա միջոցով՝ մարդկային հոգու տարբեր ելևէջները, բազմազանությունը:

---

[9] Դ. Գասպարյան, Ժամանակ և շարժում, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 100:

[10] Զ. Ավետիսյան, Գեղարվեստական մտածողության հետքերով, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 19:

3.2. Նարեկացու հետ «հարցազրույցի» արդյունքում

Նարեկացին Արարատն է հայոց, հոգու լույս ու մրմունջ, լուսե հավերժումի ուղեկից ու աղոթք Աստծուն հասնելու ճանապարհին:

Մարդկային հոգին լույսի է ձգտում, լույս է արարում մարդկային հոգին, դառնում է աղոթք հավերժի ճամփին, նայում է իրեն, աշխարհին, մարդկանց, հոգու թևերը սրբում է սիրով ու խոնարհությամբ, տագնապում, լալիս: Փառաբանում է Արարիչ Աստծուն և խոստովանում զղջացյալ հոգով մեղքերն իր բոլոր, մեղքը բոլորի: Նարեկա վանքի ճգնավորը սուրբ խիղճն է համայնի, ապաշխարության աղոթողը մեծ կյանքի ճամփան է նվիրում մարդկանց իր լույս աղոթքով, ձաղկում է իրեն և սրբությունից իջած, հեռացած խեղճ ադամորդուն հավերժի լույսի հույսով է օծում: Նա Աստծու Խոսքն է լցնում մեր հոգին՝ որպես բալասան, լույս հավերժումի ու կյանքի աղբյուր:

Նարեկա վանքի Գրիգորը սուրբ իր ծիծաղախիտ Վանա ծովակի ծփանքն է լցրել իր տաղերի մեջ՝ հոգելույս, չքնաղ, վարդագեղ ու պերճ:

3.3. Լսելով թումանյանական խոսքը՝ պարզ ու խոր

Մեկը կանչում է՝ էստի՛ համեցեք, և մեր սրտի մեջ խոսքն է բարբառում, Դսեղից հասնում մեր մտքին ու մեզ: Ու մենք տեսնում ենք մեր հայ Գիքորին՝ անմեղ, խեղճ, բայց մեծ, մեծ իր մաքրությամբ, իր սրտի սիրով: Ապի՛՝ կանչում է նա մեր սրտի մեջ, մեր հոգու միջից մեզ ձայն է տալիս՝ էստի՛ համեցեք. հայ հողի կանչն է, զուլալ կարկաչն է հայ մանկան սրտի: Բայց ցուրտ աշխարհի քամիների հետ վայրագությունն է սրտաճեղք գալիս, հայոց հանդերի աղբյուրները պաղ կարոտի մեջ են զուլալ պաղպաջում: Ու մեզ կանչում են՝ էստի՛ համեցեք: Թումանյանական աշխարհը գալիս, ձուլվում է խղճին, ձուլվում է հոգու ակոսներին խոր, դառնում բարության հունդ ու ավետիս: Լոռվա սարերն են ձայն տալիս իրար, մի անմեղ մանուկ՝ անունը Մարո, դառնում է սրտից պոկված արձագանք, որ զրնգում է ունկերի խորքում, ու տառապանքը դառնում է մղկուտ: Հառաչանքով են ձորերը լցվում, և հառաչում են երկինք ու երկիր: Հայի խղճի մեջ աշխարհն է լցվում, ծովեծով խիղճը դառնում է օվկիան: Իսկ Թումանյանը դեռ լույս է տալիս ու չի սպառվում: Ու չի սպառվի, քանի խիղճը կա, քանի դեռ ցավը կսմիթն է խղճի, քանի սարերում ջինջ աղբյուրներ կան, իսկ արցունքներում՝ երազ ու խոստում: Քանի Փարվանա լճի ջինջ խորքում կա ապարանքը սեր ու սպասման, ու անշեջ հուրն է սպասման խորքում՝ որպես կորստի անսփոփ ատյան: Թումանյանը մեր երազների մեջ անցյալի հուշից կրակներ վառեց: Ծաղկում է սերը, ցավ է խրճիթում, օրհնանքն է հնչում հայր ու

պապերի: Անուշի սերը հային պարուրվեց, հավերժի գրկում անմահությունը Թումանյան մարդու սրտից ու հոգուց ծիլ տվեց, աճեց ու թփակալեց և դարձավ պտուղ երկնքի խորքում, սիրահարների համբույր երկնքում, Համբարձման գիշեր, հարսանիք ու խոսք, Սարոյի նվագ, սիրող սրտի երգ, Անուշի մղկուտ, խելագար կորուստ, սեր՝ մահից հզոր, անսահման մի գիրկ հայոց աշխարհի: «Ամպի տակից ջուր է գալիս». բանաստե՞ղծն է ստեղծում հայոց աշխարհի անթարգման պատկերը, թե՞ հայոց աշխարհն է գալիս-պոռթկում, խաղաղորեն իրեն գտնում բանաստեղծի շուրթերին: Եվ տիեզերքի աստվածային ճամփորդի հայ ծնված, բանաստեղծ ծնված, ամենայն հայոց բանաստեղծ ծնված հոգին ու մարմինը դարձան մի մի ժամանակի մեջ, որ հաշվում ենք 54 տարի մեր երկրային ժամանակով ու չափում-ըմբռնումով: Ու փորձում ենք հասկանալ, որ նա՝ այդ հարազատ հոգին, «վար»՝ ներքևում մնացած մարդու համար արդեն խորթ է: Եվ փորձում ենք վեր ելնել նրա կարոտի, սպասման, բարության, ճշմարտության սանդուղքներով, որ մաքրվենք ու մաքրենք մեր մտքի, կյանքի ու սրտի աշխարհը ցեխերից ու աղմումներից վայրենի, որ չլինենք խորթ, որ հարազատը խորթ չթվա, որ մաքրվենք խորթությունից, լինենք անշեջ հուր, լինենք լավության խոսք ու անմեռ գործ: Լինենք այնքան մաքուր ու մանուկ, որ «որդիանց որդի» միտքներս եկած «շունն» ու «կատուն» դառնան հայոց հավերժաբարբառ համով զրույցի հեքիաթաբարբառ զրուցընկերներ, և «ուրբաթ օրը համեցեք տար»-ը լինի ու մնա, լինի ու դառնա հայերեն խոսելու, հայավարի ապրելու սովորական խոսք, հարազատության թևավոր բառեր միայն, ու ժպտանք իրար թումանյանավարի:

Գլուխ 4. Գրողը՝ գեղագիտական արժեք ստեղծող

Գրողի հետ «զրուցելիս» զգանք նրա խոսքի մեղեդին, ասելիքի ձևի մեջ տեսնենք երկի՝ բովանդակություն և գրողի ու հերոսների՝ հոգեբանություն կերտող վրձնահարվածները: Գեղարվեստական գրականությունը գեղարվեստականության ընկալման ու արտահայտման խոսքային տարբերակն է: Գրականության և՛ ասելիքի, և՛ գեղագիտական արժեքի կրողը բառ-պատկերն ու միտք-պատկերն են: Երկը կրում է գրողի անհատականության կնիքը, պատկերավոր մտածողության արտահայտություն է, նրան հատուկ են գեղարվեստական պատկերավորման և արտահայտչական միջոցներ: Խոսենք դրանց մասին:

Բաղաձայնույթը նույն բաղաձայնների կրկնությունն է. «Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից»[11]:

Առձայնույթը ձայնավոր հնչյունների կուտակումն է. «Առաւօտ լուսոյ, /Արեգակն արդար, /Առ իս լոյս ծագեա»[12]: Գեղարվեստական խոսքում (հատկապես չափածո) կարևոր է ռիթմը: Չափածոյին հատուկ է հանգը (իհարկե, ոչ միշտ)՝ բանաստեղծական տողերի՝ նույն կամ նման հնչյունախմբերով ավարտվելը: Փոխաբերությունը մի բառի փոխաբերական գործածությունն է մյուսի փոխարեն. «Մեգն է մեկնում արձակուրդի» [13] : Բառախաղում արտաքուստ նույնանում են տարբեր գաղափարներ: Փոխանունության դեպքում լրացումը փոխարինում է լրացյալին: Մակդիրը բառ կամ բառակապակցություն է, որը փոխաբերորեն և հուզականորեն բնութագրում է առարկան. «երգուն քայլք», «լուսադող ապակիներ», «ածխացած սպասում»[14],- գրում է Պ. Սևակը: Պարադոքսը առաջին հայացքից սխալ թվացող նուրբ, խոր միտք է, օրինակ՝ «Հանդիպումը բաժանումի սկիզբն է հենց»[15]: Չափազանց մեծ է համեմատության գեղագիտական արժեքը. «Գերզգա զանգածաղկի պես /Դուռն ինքն է բացվում ու փակվում» [16] : Չափազանցության դեպքում հատկանիշը կամ երևույթը ներկայանում է սոցորականից առավել չափով. «….Կորավ փոշում /Ու երերաց երկրի գունդը»[17]: Խոսքը արտահայտիչ է դարձնում նաև շրջադասությունը. «Քնքուշ փռված է լուսազարդ շղարշ /Անհայտ կողմերից իմ

[11] Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Հայ գրականության քրեստոմատիա, Երևան, 2007, էջ 22:
[12] Հայ դասական քնարերգություն, Հատոր 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1986, էջ 224:
[13] Պ. Սևակ, Եղիցի լույս, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1992, էջ 187:
[14] Նույն տեղում, էջեր 324, 325:
[15] Նույն տեղում, էջ 323:
[16] Նույն տեղում, էջ 367:
[17] Հովհ. Թումանյան, Հատոր 4, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991, էջ 36:

երկրի վրա»[18]: Խոսքին գեղարվեստականություն, արտահայտչականություն են հաղորդում նաև հարանունները: Շրջասույթի դեպքում առարկան կամ երևույթը բնութագրվում է բառակապակցությամբ կամ դարձվածքով:

Գրողները պատասխանում են գեղեցիկ խոսքի փնտրտուքի մեր ծարավին: Մինչև Նարեկացին «չպատասխանի» մեզ, գոհար վարդը շողեր չի առնի արեգակի վեհ վարսերից, Սևակի գեղարվեստական մտածողությունն է մեր մտքի աչքերի առաջ դնում խմորվող երջանկության պատկերը: Սևակն է մեզ սովորեցնում, որ կան «երգուն քայլք», «լուսադող ապակիներ», «ածխացած սպասում»: Նա սովորեցնում է, որ կարելի է ուսով առաջ մղել ժամանակը:

Գրականության գեղարվեստականության արժևորումը ընթերցողի կողմից ենթադրում է բարոյական ու գեղագիտական արժեքների դավանում: Այդ դավանանք-հավատամքի կրողն են գրողները. այն մեզ տրված պատասխանների հիմքն է: Մեր մտորած հարցին գրողը տալիս է պատասխան, և այդ պատասխանը մենք պիտի կարողանանք (որպես ընթերցող և որպես ուսուցիչ) ոչ միայն ընկալել, այլև «թարգմանել» աշակերտի մտքին, սրտին, զգացմունքներին, ճանաչողությանը, կարողություններին համապատասխան՝ դրանով նպաստելով նրա նոր կարողունակությունների ձևավորմանը:

Փորձենք Վահան Տերյանի քնարերգության գեղարվեստականության բացահայտում-արժևորումը դարձնել մեր և աշակերտի մտքի ու հոգու հանդիպումը բանաստեղծի հետ:

Տերյանը, հուշի կարոտներ առած, գալիս է մեզ հետ սիրով խոսելու, գալիս է որպես սրբազան երազ ցավ ու արցունքի ցոլանքով լռին, իր հետ բերում է թրթիռներ բազում, գարունի թովչանք, աշունի արցունք և լույս մեղմություն: Սերը կանչում է Տերյանի սրտով, երգ է շաղ տալիս ակոսների մեջ ջինջ սպասումի: Մերն է Տերյանը, մերն են սերը իր և հոգին՝ ժպտուն, թախծոտ ու պայծառ: Լալիս է սիրտը, ցնծում է, հրճվում, տառապանքների մլարի միջից մի մաքրությունէ շողում մշտարթուն: Տերյանի երգը՝ հոգու մեղմ աղոթք, հույզի մանանա, մաքրության ղողանջ և սպասումի մշտերազ բուրմունք, հայրենակարոտ սրտի հիացում և կոչ ու բորբոք արդարության կանչ:

Տերյանի երգը՝ մաքրության սարսուռ.

-Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր…

Տերյանի երգը՝ սիրո հրացոլք.

[18] Վ. Տերյան, Բանաստեղծություններ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 150:

-Ես էլ դու եմ, ես չկամ…

Տերյանի երգը՝ անխռով, մենակ.

- Սրբազան երազ, կարոտալի ժա՛մ…

Տերյանի երգը՝ հայրենական կանչ.

-Երկի՛ր Նաիրի, երազ հեռավոր…

Տերյանի երգը՝ սուրբ ու անարատ.

-Երկրիս մոխիր ու ավեր՝

Դու անմահ սիրտ, Արարատ:

Տերյանի երգը՝ հուշիկ ու անչար, թափանցիկ, պայծառ.

-Խաղաղ-անչար է, գեղեցիկ-պայծառ

Անտրտունջ նինջը մահացող օրվա:

Տերյանի երգը՝ անեզր, անափ, բառեր՝ մեղմ թախծող ու չարտասանված: Իր լուռ բառերն էլ որպես խենթ հուղում մարդկային հոգու երկինքն են հուզում: Կարոտի երկրում՝ սպասում ու լույս.

-Արդյոք ու՞ր ես, խորհրդավո՛ր արշալույս,

Հանդիպումի երջանկության պայծառ օր…

Հանդիպում Տերյանի հետ, տերյանական պայծառ վեհության ու մաքրության, քնքշանքի ու թախիծի, հրճվանքի ու սիրո, սպասումի ու ճշմարտության հետ:

Գրական երկի ու ստեղծագործողի ոգին, ասելիքը, գեղարվեստականության ելևէջները ինչպե՞ս կարելի է ընկալել ու հասցնել ընթերցողին (աշակերտին): Անշուշտ կարդալով, կարդալով ոչ միայն բառը, այլ նաև բառի խորքում թաքնված իմաստներն ու գեղեցկությունը: Մեր մտքերը պիտի ունենան երկի հետ հարազատության կնիք, գեղարվեստականության դրոշմ: Այսպես՝ զգանք ու զգալ տանք, որ հայրեններում[19] հայոց բառն է ծաղկում:

Երգում է բառը արտույտի նման, թառում կարոտի երդ ու կտուրին և դառնում հայրեն՝ շողշողացող լույս, երազ հոգեբուխ, սիրավոր լորիկ, սոխակ սիրահար, դառնում աչքի լույս, հաստատում-ժխտում, հավերժի թրթիռ, հավերժի մերան.

Ես աչք ու դու լոյս, հոգի, առանց լոյս աչքըն խաւարի,

Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց ջուր ձուկըն մեռանի.

Երբ զձուկն ի ջրէն հանեն ւ՚ի այլ ջուր ձըգեն նայ ապրի,

Երբ զիս ի քենէ զատեն՝ քան զմեռնելն այլ ճար չի լինի:

Ի՞նչ է ուզում բառը. այն, ինչ ուզում է հոգին:

[19] Տե՛ս Նահապետ Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1988:

Կարմիրն է սիրո ու կարոտի գույնը. «Հանցգուն եմ ի սիրուդ, զինչ ամպերըն առնեն շառափ»: Նենգավոր կոչված աչքերը կարոտի երազն են թարգմանում, և բառը հնչում է իր հակառակ իմաստով՝ հավատարիմ աչքեր, որ հավատարիմ ու սիրալեցուն հոգու անխարդախ սերն են ցոլացնում: Հոգնելով չի հոգնել սիրավոր սիրտը, հոգնելով չեն հոգնում սիրավոր աչքերը:

Հայրենի բառը շող է ու թրթիռ, երգ ու ադամանդ, թարգմանն է հոգու, չխամրող ոգի: Թեթև է բառը երբեմն նաև, բայց ունի թախիծ իր մեջ ամբարած: Կարոտ ու կատակ արցունքն են բառի և արմատ ունեն՝ խոհերում աճած.

Քո հարն ալ շատ վարձկ արեր, շատ կարմունճ կապեր գետերուն.

Դուն ալ մէկ վարձկունք մարա, պագ մը տուր դընչիդ մօտերուն:

Սիրո տաճարի լույսն անվախճան է ու ապրեցնող.

Երթամ ես, ժամկոչ ըլլամ, գամ, լինիմ տաճրիդ լուսարար:

Սիրո գինով հարբած հոգու համար սերը գույն ու բույր ունի, երազի ու արբեցումի անմահաբույր թովչանք: Բառից սեր է կաթում և դառնում անմահության բանալի.

Քո գունովըն գինի՛ պիտէր, խըմէի ու հարբենայի,

Քո ծոցդ Ադամայ դըրախտ, մըտնէի, խընծոր քաղէի…

Վարդաբույր բառերի մեղեդին է լցված հայրեններում՝ շողապարզ ու բերկրալից, կարոտադուռ և վարարաթրթիռ: Կանչ է ու տուն, երգ ու աչքալույս բառը հոգեբուխ, աննման սիրո աննման ու փնտրված-գտնված դրոշմն է բառը՝ հյուսված հայրենում որպես գորգահյուս ծաղիկ և քնքուշ կարոտ ու ցող մեղեդու: Պարզ, գողտրիկ բառը.

Այսօր ինձ հազա՛ր կաղանդ աչերուս, որ ըզքեզ տեսա,

Ձեր տունն ի բանէ եկի, զքեզ տեսայ, բանըն մոռացայ…

Գլուխ 5. Ի՞նչ է ասում գրողը ժանրի ընտրությամբ

Գրական տարաբնույթ տեքստերի ուսուցման բնույթը ևս հուշում է հեղինակը: Նա իր նախընտրած ժանրով գալիս է բացատրելու իր ասելիքը, արտահայտելու իր ու իր հերոսների հույզերը: Ցանկացած գործ անցնելիս անհրաժեշտ է «գտնել» հեղինակին, որը պատմում է իր ստեղծագործությունը, մեկնաբանում, «պատասխանում» մեր և աշակերտների հարցերին: «Հեղինակի աթոռ» անվանվող հնարը դրա առավել տեսանելի տարբերակն է: Իսկ ասմունքի դեպքում աշակերտը մտնում է բանաստեղծի դերի մեջ, «դառնում» հեղինակ կամ գոնե հեղինակակից. բառերը պիտի ծնվեն աշակերտի մտքից, հոգուց ու զգացմունքներից:

Գրականագիտության կողմից գրական երկերը դասդասվում են երկու կարևոր սկզբունքով՝ ըստ ձևի և ըստ արտահայտման եղանակի: Ըստ ձևի լինում են չափածո, արձակ և թատերգական: Արտահայտման եղանակները կոչվում են սեռեր. դրանք երեքն են՝ պատմողական սեռ, քնարերգություն և թատերգություն: Սեռերն ունեն իրենց ենթատեսակները, որոնք կոչվում են ժանրեր: Գրական տեքստի յուրաքանչյուր տեսակ ենթադրում է ուսումնասիրման յուրահատուկ մետեցում: Ուսուցչի խնդիրը պիտի լինի աշակերտի հետաքրքրությունները խթանել, որոնել և կիրառել տարբեր մեթոդներ՝ շեշտը դնելով համագործակցության, աշակերտակենտրոն դասի վրա: Այսպես՝ հեքիաթների ուսուցումը կարելի է կազմակերպել բեմադրելով, բանաստեղծությունների ուսուցման մեջ անհրաժեշտ է կարևորել ասմունքը, արտահայտչականությունը, տողատակը հասկանալը, առակների մեկնությունները հարկ է բխեցնել նրանց խորքային բովանդակությունից, կապել աշակերտների փորձառության հետ: Կարևոր է աշակերտին գրական տարբեր ժանրերին ծանոթացնելը: Սովորողները պիտի կարողանան բանաստեղծությունները խմբավորել և վերլուծել նաև թեմատիկ հատկանիշով, գրականագիտական գիտելիքներ պիտի ունենան բանաստեղծության կառուցվածքի, տան, հանգի և նրա տեսակների մասին: Այս ամենը պիտի հանգեցնի կարողունակության: Պոեմներ ուսումնասիրելիս ուսուցիչը և աշակերտները համագործակցելով որոշում են դրա տեսակը՝ ելնելով դրսևորման եղանակից: Այսպիսի աշխատանքը դառնում է հետաքրքիր, հետազոտության տարրեր պարունակող: Ուսուցիչը աշակերտին սովորել է սովորեցնում: Այսպես՝ ստեղծագործության բալլադ լինելը հասկանալի է դառնում, երբ աշակերտները գտնում են այդ երկի ժողովրդական ավանդութուն ունեցող հիմքը կամ հերոսականությունը: Մեծ է առակի դաստիարակչական արժեքը. այն իր այլաբանությամբ և հակիրճությամբ կոչված է մարդու մեջ ձևավորված արժեքային

համակարգը առավել դրական դարձնելու: Համառոտ, իմաստուն մտքեր ընկալելու և արտահայտելու կարողունակությունը առավել զարգանում է առած-ասացվածքների շնորհիվ: Այս դեպքում կյանքի մասին իմաստուն պատասխաններ է տալիս ժողովուրդը: Շատ են արձակ շանրերը. յուրաքանչյուրը առանձնանում է իր ասելիքի ձևով, խորքային նպատակադրմամբ, կառուցվածքով, ծավալով: Համեմատենք պատմվածքը և նովելը: Եթե աշակերտը գիտե՝ ինչ է պատմվածքը, դժվար չէ նրան ընկալելի դարձնել նովելի ժանրը: Եթե ուսուցիչը ոչ միայն ասում է, որ Գր. Զոհրապը նովելներ է գրել, այլ նաև հարցադրումներով կարողանում է աշակերտներին մղել որևէ նմանատիպ երկում ճանաչելու կառուցվածքային տարբերիչ գծերը, նրանք հեշտությամբ կտարբերեն՝ որն է նովել, որը՝ պատմվածք: Ծավալով փոքր ստեղծագործությունները կարող են կարդացվել դասարանում և դառնալ ուսումնասիրության նյութ, իսկ ծավալունները ներկայացվում են մեջբերումներով, բնութագրումներով, վերլուծություններով միայն, սակայն այս դեպքում ենթադրվում է (ցանկալի է), որ աշակերտները նախօրոք պիտի կարդացած լինեն, նույնիսկ գրառումներ կատարած: Կարելի է բանականին ծավալ ունեցող որոշ երկեր, մասերի բաժանած, դարձնել տարբեր խմբերի ուսումնասիրության նյութ՝ դրանով խթանելով համագործակցությունը և հետաքրքրությունը ստեղծագործության հանդեպ: Այսպես կարելի է ուսումնասիրել պոեմներ, բալլադներ, հեքիաթներ, նովելներ, համեմատաբար երկար պատմվածքներ:

Ժանրը հեղինակի՝ ընթերցողի հետ զրույցի ընտրած եղանակն է՝ իր նախասիրությունից, կարողությունից և ասելիքից բխող:

Գլուխ 6. Պատասխան գրողի ասելիքին

6.1. Սահյանական ընկալումներ կամ ժամանակի թևերին

Ժամանակը Սահյանին առել է իր թևերին, իսկ իրականության և կարոտի սահմանագծին մարդկային կյանքն է՝ ոգեղեն, տոհմականչ ու բարի: Սիրո քնքշանքը դաղձի ծաղիկ է, կարոտի անսպառ սփոփանք, հայրենաշող ու կարկաչող եզերք: Լուսավոր սրտի տաքուկ ու զով անկյունում մանկության ու սիրո անհունաշող աշխարհն է՝ հրաշքի պես իրական, սիրալեցուն, երազային ու կանչող: «Հրաշք լիներ, կրկնվեր այն հրաշքը իրական»՝ մտերմիկ մրմնջում ու մտերմորեն զրուցում է բանաստեղծը, և ջաղացպանի աղջիկը գալիս կանգնում է մեր ու իր աչքի առաջ իր սիրո ներկայությամբ: Պարզունակության չափ մաքուր ու պարզ անգյուտ պատկերը ոգեղեն, իրական, բանաստեղծական, սիրալի էության, սիրո, մանկության անխաթար գյուտ բառաձև-բանաձևումն է՝ «առուն ստվերս տաներ ջաղացպանի աղջկան»: Նաիրյան դալար բարդու սոսափն ու կանաչ քնքշանք-սլացքը բանաստեղծորեն զրուցում են ժամանակի ու հայրենականչի հետ և ավետում բանաստեղծի գալուստը իր խոհալեցուն, հայրենապաշտ, անխաթար ու լուսավոր եզերքից, որ կնքված է հայրենիք, բնություն, տոհմ, ազնվություն, սեր… անուններով, որ արարումի կնիք ունեն և Արարչի շունչ: Հայաստան երկիրը թև ու խոկմունք է տալիս, սիրո անսահման հավատամք, և իրենավարի Սահյանը ժայռի մեջ մի տուն է հիշում…

Մտորում-պատկերներ, ոգի, շունչ ու արարում կա բանաստեղծի հոգում,նրա ու մեր ապրած աշխարհում, մշտապես ապրող հուշ-կարոտներ կան իրականության սահմանից այս դին: Ամպի ծվեններով ու կապույտ մշուշներով լեցուն է նրա սրտի կանչը, ունկերում կարկաչներ են, ղողանջներ, աչքերում՝ քարափների երգ, ուշաթափված առու: Կարմիր սարսուռ է կաթում նրա լուսավոր խոսքի ակունքներից, իրականության կարոտից և հուլունք-հուլունք շողշողում: Աղոթարան սարի սրտից տեսլանում է լույս աղոթարանը, և աշխարհ ու սիրտ լցվում է կյանքի ճռվողյունով: Ներկան ապրում է անցյալի կենսառատ իրականությամբ, որ պարզ ու միամիտ սիրով էր շնչում: Սահյանը այդ մաքուր ու լուսավոր աշխարհի իրական ասքն է բանաստեղծորեն ոգում, մտերմորեն զրուցում է անցյալի ներկայի հետ, գնում մանկության արահետներով, մեզ տանում մաքրության արահետներով, հոգս ու գործի, ծանրության ու տագնապների ստվերներից վեր տեսնում մարդկային հոգու և բնության ոգու անխաթար ու դաշնահյուս լույսը, ապրում ու ապրեցնում, տխրում ու տխրեցնում, պայծառություն է պեղում հոգսաշատ օրերի բարդոցից: Հորովելի երգն

է դառնում նրա խոսքի զուգընկերը, և իրիկնահացը «դառնում» է կարոտ, սեր ու բնավորություն, որ իրենցով պիտի շեն պահեն ոգին, աշխարհը, օջախը հայոց: Սահյանական կաթնահունց երկնակամարում լույս ու հուշ է, մշուշների շղարշի տակ՝ աշնան խաշամ, նրա անսահման խոսքում ամպը լեզուն կուլ է տվել, շուրթին կանաչ ու կարմիր տողեր են թպրտում: Հոգում տեղատարափ է, հուշերի մեջ՝ թոն, իսկ տարիները մտերիմներն են, որոնց հետ սիրով խոսքի է նստել, տալիս է, առնում: Եվ իրականության ու երազների անխաթար եզերքը դառնում է հոգու պատգամաշատ խորան, որտեղ հանդիպում են հույսն ու սերը, լույսն ու նվիրումը՝ ի հեճուկս մեղք-մեղանչումների, կորուստ-դավերի, ի շնորհ անմահության: Դառնում է մաքրության, սպասումի երանավետ հանգրվան: Սահյանի բնապաշտ, սիրապաշտ, պարզ ու խորունկ քնարերգությունը, հոգու երգը, սրտի խոսքը, մտքի խոհը, բանաստեղծորեն լուսավոր, հայկականորեն հարազատ, բնական, արվեստաշող սահյանական զրույցը մեզ հետ, իր, աշխարհի, Հայաստան երկրի, քար ու քարափի, լույս ու լռության հետ: Բանաստեղծորեն ունկնդիր Սահյանը, բանաստեղծորեն կորստաշատ ու երջանիկ Սահյանը, որ շարունակում է հալեցնել մեր լռության ամպը, կենդանություն տալ մեր լալկված-քարացած ղգացումներին, արթնացնել հոգու կարոտներն ու հույզերը, շունչ տալ, հոգի նվիրել քարին ու քար անտարբեր մարդուն, շարունակում է կարդալ ու մեզ սովորեցնել անմահության իր բաժին դասը: Մեր բաժին, մեր ժողովրդի ու ժամանակի բաժին Սահյանը, որի հետ սիրում ենք, մտորում, թախծում և պարզապես զրուցում: Նա շարունակում է մեզ զրույց նվիրել՝ բացելով մեզ համար մեր սերերի, կարոտների, լույսերի աշխարհը, պարգևելով մի պարզ ու խորունկ Հայաստան, մի պարզ ու խորունկ աշխարհ, պարզ ու խորունկ մարդկային շիտակություն, որ և՛ պատգամ է, և՛ սփոփում, և՛ պարզասիրտ ու խորագետ իմաստասիրություն: Հանճարեղորեն պարզ, հանճարեղորեն բնական խոսքի մեծ վարպետը, որ ուղղակի սիրում է, տագնապում, խորհում, բացում մեր աչքերը մեր ցավ ու սիրո դիմաց, մեզ ձուլում մեր կարոտների, բնության, մեր մաքրության ու անմահության հետ: Իր ժամանակը ապրեց հավերժի ամբարուն լույսով, իր թևերին առավ ժամանակի ակնթարթը՝ իր հոգով երկնելով հավերժի թրթիռներ, ձուլվեց ժամանակների շնչին, հավերժի ելևէջներին ու իր մարդաղերսի շողերով իրենավարի մեզ մի՛ քիչ էլ մոտեցրեց մեր Արարչին: Բանաստեղծների կոչումը, հա՛յ բանաստեղծի կոչումը, Սահյա՛նի կոչումը, սահյանական առաքելությունը:

6.2. Հրանտ Մաթևոսյան՝ իրականության ասացողը

Հարցեր չտանք Հրանտ Մաթևոսյանին. նա շատ լավ գիտե լռության ու բառի

գինը, և ինքն է պատմում, լռում, գաղտնագրում, տալիս մեր անգամ չձևակերպած, ձևակերպում չգտած հարցերի պատասխանները. «Նրա գայթելով՝ ժամանակի դոնդողե հավիտենականությունից խլրտալով զատվեց ու գրասենյակում հովվի պես կանգնեց մեր ապրելու ժամանակի ուժեղ, գեղեցիկ, պինդ հասակը» [20] :

Իրականության գեղարվեստական արարումի ասքն է Հրանտ Մաթևոսյան հայ մարդու շուրթերին: Նա խոսում է իր աշխարհի, այդ աշխարհում ապրող մարդկանց հետ, և մենք դառնում ենք նրա և գրական իրականությունների ականատես մասնակիցները: Երկրի ջիղն է նրա պրկված խոսքում, որ շողում է որպես աշնան արև: Երկրի տիրոջ պարտավորություն-իրավունքով են խոսում ինքը, իր հերոսները: Խոսքերը պարզ են, խորն են մաթևոսյանական մտքերը: Ծմակուտյան ասքի արարողն է նա: Սովորական ու անսովոր մարդիկ են նրա հերոսները: Մաթևոսյանը գրականություն բերեց ճշմարտության, պարզության, կյանքի նոր որակներ, հերոսների նոր պատմություններ՝ լուսավոր ու ճշմարիտ, կենսահորդ ու հասարակ: Ազգային ու ժողովրդային է նրա գրականությունը, ժողովրդի փիլիսոփայությամբ է հագեցած նրա խոսքը, իր ժամանակի ու բոլոր ժամանակների մտածողության խոհերով նա աշխարհի տեսանելի ու անտեսանելի ելևէջներ է բացում, ելևէջներ կյանքի, խոհի, խոհի, սպասման: Նրա ստեղծագործությունը հայ մարդու համար ինքնության փարոս է կյանքի՝ խոչ ու խութերով լի ճանապարհին:

Մաթևոսյանի աշխարհը, նրա՝ կյանքը լցնող հայկական ու մարդկային նշանակալի իրողություն-զգացողությունները…

6.3. Պարույր Սևակի սիրո անչափելի չափումը

Երբ հարցեր ունենք ինքներս մեզ, դիմում ենք մտերիմների, որ օգնեն մեզ ինքնագտնումի ճանապարհին: Գրողները մեր անծանոթ ծանոթներն են, մեր մոտ մտերիմները, հույզ ու որոնման մեր առաջնորդները: Եթե կարողանանք լսել ու հասկանալ նրանց, նրանք մեզ կպատմեն ոչ միայն իրենց, այլ նաև մեր մասին, մեր իսկ սպասումները «կթարգմանեն» մեր լեզվով, մեր երազի ու ճշմարտության լեզվով: Որպես պատասխան սևակյան սեր ասելիքին՝ մենք էլ բառերով գրկենք նրա սիրո անսահմանությունը:

Օրերի հեռվում հնչում է մի երգ ու տանում հոգին սերերի հունով, տանում սիրո պես, սիրո թևերին: Հեքիաթ աշխարհի սիրով են ապրում բանաստեղծները, մեկ նետ են դառնում, մեկ՝ դառնում աղեղ և «թոթովում են հնչյուններն անմահ»: Սևակյան արդարամտության հորիզոնը պռնկեպռունկ լցված է սիրով: Չէ՛, անսահման է այդ

[20] Հ. Մաթևոսյան, Հատոր 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 45:

սերը, ինչպես անսահման է բանաստեղծական արարման շունչը: Անպռունկ, անկոպար, անեզր է Սևակ բանաստեղծի, Սևակ մարդու, Սևակ սիրողի ու սիրահարվածի աշխարհը. անսահման է, ինչպես տիեզերքը, անհուն է ու անվախճան, ինչպես հավերժը: Սերը հավերժն է, տիեզերքի ոդին է սերը: Այդ ոգով է ապրում ու ապրեցնում, բողոքում ու դժգոհում մեծն մտահոգն ու սիրահարը: Սիրահարը արդարության, մարդկայնության, անկեղծության, ճշմարտության, ներողամտության, հայրենիքի, աշխարհի, ինքնահաշտեցման: Սերը Սևակ մեծ ընդվզողի լինելության հիմքն է, պատերն ու առաստաղը և ավելին, միշտ ավելին… Սերը… ինքն է, աշխարհը, մարդիկ, Աստված, իր հաշտության ու անհաշտության մակարդն ու մերանը, ճյուղն ու սաղարթը, արմատն ու պտուղը:

Բանաստեղծը սեր է պեղու՞մ. ես կասեի՝ արևերես է հանում Սիրո ելևէջներ, թրթիռ-զգացողություններ այն մեծ աշխարհից, որ կոչվում է սեր, որ աշխարհի և իր էությունն է անխաթար: Խաթարված ինքնության, խաթարված աշխարհի անիվն է սեր-բառերով, սեր-խոհերով, սեր-ապրումով ու փնտրումով տեղը գցում, պտտում, ինչպես ջրաղացքար: Ջրաղացքարի ջուրը սերն է, աղունը՝ միշտ հին, միշտ նոր մեր սիրակարոտ, սիրատոչոր, սիրալեցուն, սիրազեղուն կյանք-էությունը: Եթե սերը կա, ուրեմն կա, ապրում է մարդը, հոգին թևեր ունի: Իսկ եթե չկա, մղկտում ու հաստատում ես Սևակի շնչահատ տողերը իր Սուլամիթային: Իսկ Սևակի մյուս սերերը, անցած սերերը… Սևակը բանաձևում է, որ սերը չունի շարունակություն, միշտ ունի սկիզբ, և եթե սեր է, էլ ի՞նչ «ամենա»: Էլ ի՞նչ հարցեր տանք Սևակին իր մասին, մեր մասին, հիշողության մեջ ապրող սերերի մասին: Անթիվ ու անհամար են կյանքի հնչյունները, պատկեր-դրոշմները հոգու էջերին, սիրո տվածն ու ստացածը, տվածն ու կորցրածը, ակնկալածն ու մոռացվածը: Անկեղծ սիրում, անկեղծ բառեր է ասում Սևակը, նվիրումից ու տվածից հոգնում է սիրող սիրտը, որ հավատում է հեքիաթին, և ինքն է ստեղծում իր ու աշխարհի հեքիաթը: Հեքիաթներից հոգնել է Սևակը: Բայց … երբեք ու երբեք հեքիաթներից ու հեքիաթ սիրուց չեն հոգնել նրա մեծ սիրտը, աչքերը, ծիծաղը: Սերը դառնու՞մ է… Է մի մեծ Դու: Սևակ սիրահարի աչքերը անքուն են, բանաստեղծի ծիծաղը ուզում է ծավալվել: Անհունորեն պարզ ու խորանիստ հնչում է Պարույր սիրահարի խոսքը իր Դու-ին, իր դու-երին, իր սերերին, սիրուն, աշխարհին: Ձանգակածաղկի պես զրնգում է Սևակի սերը պատանեկության անմոռումներից մինչև իրեն պարտականության ու սիրո միջև տնկված ուղեփակոց գերան զգացողի սեր: Ցայսօր: Ու հավերժորեն: Քանզի անմահ են սերը, բառերը,

բանաստեղծի հունցած լույսը՝ սիրո ու բառերի շաղախով: Սևակ սիրահարի սևակյան սերը, պարույրավարի ընդվզում-նվիրումը ու հենց Ինքը[21]:

Գլուխ 7. Գրողին լսելուց հետո

Գրողին լսելուց հետո, երբ բանաստեղծությամբ պատասխանում ես նրան, ժամանակն ու տարածությունը ազատվում են կապանքներից, ու կարծես ծավալվում է մի հավերժական ներկա: Շատ գրողների մասին, նրանց կյանք ու խոհին ի պատասխան, գրել եմ բանաստեղծություններ, որոնցից կարդում եմ դասարանում և աշխատում օգնել աշակերտներին՝ բացելու ստեղծագործողի կյանքի, խոսքի ու հոգու շերտերը: Ահա մի քանի փոքր հատվածներ:

Հրանտ Մաթևոսյանին՝

Հավիտենության թրթիռից պոկված
Մեր ժամանակն ես մեր սրտին մեկնել,
Հպարտանալու ժամանակ չունեն.
Այսօրը, վաղը, երեկը մեկն են:

Անդրանիկ Ծառուկյանին՝

Հին երազներ միշտ ապրում են խնդությամբ
Ճամփաներում հայակերոն հավատի,
Հայրենիքը՝ սիրո թրթիռ, Երևան՝
Ոսկևորված քարավանով կարոտի:

Երվանդ Օտյանին՝

Ծիծաղեցիր, ծիծաղեցիր տխրությաամբ
Եվ ցավեցիր, որ զոհվում է սերը սուրբ….

Ստեփան Զորյանին՝

Խնձորի այգին հրճվանքն է հոգուդ և արարումի հևքը լուսաթարմ,
Խշշում է շուքով անտառը մանկութ, և դու կարոտով ասում ես՝ կգամ:

Մկրտիչ Պեշիկթաշլյանին՝

Հոգուդ տաղերը բոլոր՝ անձկակարոտ, քնքշագին,
Նվիրեցիր վեհ սիրով ու երազով ամենքին….

Դանիել Վարուժանին՝

Հայ ցեղի սրտի նվիրյալ ու խենթ՝ հեթանոս երգի շառափներ առած,
Դու՝ սիրո ցոլանք, հայի սրբին երգ, վրեժի սլացք դու հողմահալած:

Սիամարթոյին՝

[21] https://www.youtube.com/watch?v=SQ0HDhbqrmw /18. 09. 2022/

Հույսհատնումի ապառաժին զարնված
Անկորչնելի հայ հավատի լուսե՛ շող,
Հոգուդ խորքում՝ փոթորկամած կոտորած
Եվ պտուղներ ամռան՝ զամբյուղ առ զամբյուղ:

Միսաք Մեծարենցին՝

Հոգիդ, հոգիդ՝ պատյանազերծ ու բուրյան,
Անանձնական ուրախությամբ երջանիկ,
Դու՝ զտված լույս, քո կարոտը՝ լուսե վանք,
Քո ուսերին՝ հավերժումի ծիրանին:

Շահան Շահնուրին՝

Հիշատակը լուռ անցյալն է, սերը՝ իղձ,
Եվ «Շահնուրը» հոգուդ ճիչն է հայացած:

Համո Սահյանին՝

Քո հուշի հեռավոր ձորում աստղալույս երկինք է ծորում:
….Այս մի բուռ քարեղեն հողում քո երգի արևն է շողում:

Ավետիք Իսահակյանին՝

Շշնջում էիր՝ սիրտս երկինք է. սիրտդ երկինք էր՝ արևով օծուն,
Տիեզերաշող հոգուդ երկինքը տաղերիդ լույս ու բույրով է խոսում:

Հովհաննես Թումանյանին՝

Լուսահրաշ քո հոգին բարձունքներում սավառնեց.
Քո հանճարեղ պարզությամբ մերը եղար, եղար մեծ:

Ակսել Բակունցին՝

Հավաքում ես երազանքի ձորերից
Մաքուր հուշի ադամանդ ու գոհարներ,
Ասք ես հյուսում միրհավի լույս փետուրից
Եվ լույսով ես լցնում ցավի արցունքն էլ:

Ռաֆֆուն՝

Երազեցիր, որ աշխարհը Հայոց
Խենթի երազի հավատով ցոլա….
Քո Դավիթ-Բեկի սուրը շողշողաց
Եվ հավաստեցիր, որ երկիրս կա՝
Հայոց հավատի կանթեղը պահած
Արագած լեռան կատարի վրա:

Գլուխ 8. Գրողի հետ հարցազրույցի «ի՞նչը», «ինչպե՞ս»-ը, «ինչու՞»-ն

Որտե՞ղ է կայանում այս «հարցազրույցը». մեր մտքում, հոգում: Եվ որոնումների արահետներով գալիս, իրար են գտնում խոհը, հույզը, ընթերցողն ու գրողը: Ինչի՞ մասին է այն. իր, մեր, կյանքի: Ինչպե՞ս է դառնում բառ, հարց, ասելիք: Իրար հասկանալով, գնալով ընկալումի ու ապրումակցումի ուղիներով: Ինչու՞: Որ ծավալվեն Լույսը, ճշմարտությունը, խոսքը:

Գրականությունը իր մեջ ներառում է ողջ աշխարհը իր բազմազանությամբ: Անսահման է այդ աշխարհը՝ բեկված ստեղծագործողի անհատականության և հոգու հայելում, բայց ոչ երբեք անհոգի ու անշունչ՝ որպես արտացոլք, այլ կենդանի, ոգեղեն, խոսքի հրաշքով նյութեղենացած ու դարձած հոգևոր հարստություն, արժեք, որիտեղը որոշելը դառնում է մարդու, ժողովրդի, մարդկության պարգևն ու պարտքը:

Գրականությունը անձնական է ու անանձնական, ազգային է ու համամարդկային, Աստծո շնորհն է բանական մարդուն, բանականության առանցքն է ու զարդը: Գեղարվեստի կանոններով ու առանց կանոնների առաջնորդվող ոգեղն կամք, պատմություն, պատգամ ու պատում, խոսքի արարում է գրականությունը: Լինենք ունկնդիր, նաև ակնդիր, որ մեր մեջ լցվի նրա Լույսը: Գրողի խոսքը մեր հարցերի, որոնումների պատասխանն է, գրականության դասը՝ այդ հարց ու պատասխանի հանդիպաժամը, ուսուցիչը՝ հանդիպավարը: Ուսուցիչը խթանում է իր ոգևորիչ խոսքով, վերլուծություններով, մեթոդ-հնարներով, որ աշակերտները ընթերցեն գրական երկեր, տեղեկություններ գտնեն, տեղայնացնեն, վերլուծեն և կիրառեն: Զրույցի նստելով գրողների հետ՝ կառուցեն գրավոր և բանավոր խոսք՝ արժևորելու նրանց ու նրանց երկերի արտահայտած գաղափարներն ու գեղարվեստականությունը: Իրենք էլ դառնան գեղեցիկ ու վեհ գաղափարների կրող, արտահայտող, տարածող ու ստեղծող: Եվ ոչ միայն գաղափարների, այլ նաև դրանցից բխող գործերի: Ճանաչողությունը դառնա աշխարհայացքի, բարոյականության, գեղագիտական ըմբռնումների և դրանցով ապրելու հիմք, ուղենիշ ու համոզմունք: Խոսքը դառնա գործ, մարդը մարդ լինի, մնա, դառնա: սա է գրողի պատասխանը մեր հարցադրումներին, նրա ամենակարևոր դասը: Փորձենք հորինել հարցեր՝ ուղղված գրականության մշակներին (պատասխանները կան որպես կյանք-հավատամքով թրծված ճշմարտություններ):

Այսպես՝ մեր «զրուցակիցը» Թումանյանն է. «-Այս իրիկուն Ձեր տխրության մեջ պայծառ շողեր կան, ինչի՞ց է այդպես:

- Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,

Հեքիաթական պալատներում սպասում են իմ հոգուն,

Ի՞նչ եմ շինում էս ցեխերում,աղմուկի մեջ վայրենի.

Ա՛խ, թե նորից գտնեմ ճամփան դեպի էնտեղ, դեպի տուն…[22]:

Մի հարց էլ Գուրգեն Մահարուն «ուղղենք». «-Ի՞նչ է մանկությունը:

-Ամենամեծ արևը երկնքի վրա, բաց պատուհանից նայող ամենամեծ լուսինը….»[23]:

Պարույր Սևակին «ուղղված» հարցը իր խոհական-անսպասելի տողերի նման է. «-Զգու՞մ եք Ձեր սիրելիի, Ձեզանից հեռացած սիրելիի ներկայությունը:

-Այնպես եմ զգում, ինչպես երևի

Ոտից նոր զրկվածն զգում է ոտը,

Որ նույնպես չկա

Ու չի լինելու….[24]:

Ունենանք Հարց, որ հնչի Պատասխանը: Բաց պահենք մեր հոգիները Խոսքի առաջ:

Ժամանակակից տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ընթերցելու գրողի երկերը, նրա կյանքի, ստեղծագործության մասին մեծածավալ տեղեկույթի մեջ գտնել անհրաժեշտը, առավել խորությամբ ընկալել նրա դասերը և փնտրել-գտնել նրան «ուղղված» հարցերի պատասխանները: Մեծ է «խոսող» գրքերի արժեքը: Այսպես՝ լսելով Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի ռադիոտարբերակը կամ Անդրանիկ Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ» վեպի ընթերցանությունը՝ ունկնդիրները (մեր դեպքում՝ աշակերտները) դառնում են գրողի խոսքի անմիջական ընկալողն ու նրա զրուցակիցը, խոհակիցը, նույնիսկ «անցնում» ստեղծագործության արարման ճանապարհով, զգում-վերապրում ստեղծագործողի հոգեբանությունն ու ասելիքի՝ դրանից բխող ձևն ու բովանդակությունը:

Աշակերտները իրենց ու գրողի զրույցի, գրողի հետ հարցազրույցի արդյունքում կարող են ստեղծել սահիկաշար, գրել գործնական, նախագծային աշխատանքներ, շարադրություն: Գրողի և աշակերտի հարցազրույցի էջեր կարելի է համարել այցերը գրական վայրեր, կինոնկարի, բեմադրության դիտում-քննարկումները:

---

[22] Հովի. Թումանյան, Քառյակներ, Երևան, 1994, էջ 37:
[23] Հայ գրականության դասագիրք 12-րդ դասարանի համար, Երևան, «Մանմար», 2016, էջ 3:
[24] Նույն տեղում, էջ 91:

Կարելի է կազմել փոքրիկ երկխոսություններ. հնչում է մեր հարցը և գրողի պատասխանը: Աշակերտը պիտի գտնի՝ որ գրողի մասին է խոսքը, որ ստեղծագործությունից է; Սա կարելի է մրցույթի վերածել: Կարելի է հանձնարարել կազմել այդպիսի երկխոսություններ: Ահա մի քանի հարց-պատասխան.

«-Որտե՞ղ է Ձեր սիրտը:

-Իմ սիրտը լեռներում է»[25]:

«-Ինչու՞ եք հոգնած նայում ճամփաներին:

-Սերմնացանները չդարձան տուն»[26]:

«Ծմակուտն է Երևանից հեռու, թե՞՝ Մոսկվան:

-Մոսկվայից Ծմակուտի վրայով Երևան ես հասնում մի 100 որպեում, իսկ Ծմակուտից Երևան հասնելու համար պետք է գնալ մի ցերեկ ու մի գիշեր»[27]:

«-Ինչու՞ եք այդպես թախծոտ. ի՞նչ եք հիշել:

-Օրը մթնեց, ժամն է արդեն /Իրիկնահացի, /Տխրությունս կամաց-կամաց Փոխվում է լացի»[28]:

«-Ի՞նչն է Ձեր բողոքի պատճառը:

-Մէկին հարամըն յաջողի, /Մէկին հալալըն կորուսի»[29]:

«-Ու՞մ է կանչում Ձեր սերը:

-Յիս կանչում իմ լալանին»[30]:

«-Ի՞նչ զգացումներով եք լցված:

-Ես կանգնած եմ լուռ, անչար է հոգիս, /Թախիծըս խաղաղ անուրջի նըման….»[31]:

«Ո՞վ է մայրը Ձեզ համար:

-Մեր հույսի դուռն է մայրս, /Մեր տան մատուռն է մայրս»[32]:

Կարելի է միայն հարցերը տալ և առաջարկել գտնել պատասխաններ գրողների գեղարվեստական երկերից, նամակներից, խոհերից:

Գրողի հետ «հարցազրույցը» առաջին հերթին ենթադրում է նրա գեղարվեստական երկերի, այլ գրվածքների, նրա մասին հուշերի, ապրած ժամանակի լավ իմացություն, գիտելիքների վերլուծական և աշխարհի քննական ընկալում: Միտված է վերլուծական և քննադատական մտածողության, ինքնուրույն

---

[25] Նույն տեղում, էջ 167:
[26] Նույն տեղում, էջ 117:
[27] Նույն տեղում, էջ 101:
[28] Նույն տեղում, էջ 79:
[29] Հայ դասական քնարերգություն, Հատոր 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1987, էջ 102:
[30] Նույն տեղում, էջ 315:
[31] Վ. Տերյան, Բանաստեղծություններ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985, էջ 34:
[32] Հայ գրականության դասագիրք 12-րդ դասարանի համար, Երևան, «Մանմար», 2016, էջ 62:

ուսումնառության հմտություններ ձևավորելու: Նաև կոչված է նրան, որ աշակերտը արժևորի մարդկային արժանապատվությունը, արդարությունն ու օրինականությունը: Այս ամենը պիտի նպաստի, որ սովորողը դրսևորի հարգանք, քաղաքացիական մտածողություն, պատասխանատվություն, հանդուրժողականություն: Գրող-ընթերցող հարցազրույցը տանում է ընդհանրական հասկացությունների ոլորտ. գրական երկի ու ընթերցողի հետ «հանդիպում» են ժամանակն ու տարածությունը, անհատներ և հարաբերություններ, անհատական և մշակութային արժեհամակարգեր, զանազան կառուցվածքներ և գործառույթներ, փոփոխություններ ու զարգացումներ, կայուն և փոփոխական վիճակներ, բազմաթիվ պատճառներ և հետևանքներ:Գրողը տալիս է նաև այս բոլոր հասկացությունների վերաբերյալ հարցերի պատասխաններ: Տալիս է որպես ճշմարտության կրող, որպես առաջնորդ, որպես մխիթարող ու նվիրյալ, որպես խոսքի արքա ու սպասավոր Բանի, որպես գեղագետ ու բարոյագետ, որպես մարդ, իր ժողովրդի զավակ, որպես քաղաքացի, որպես Աստծո շնորհընկալ ու պատվիրանապահ արարած:

Գրականության դասին ուսուցիչը պիտի աշակերտին օգնի, որ նա ճամփաներ ուղենշի, որոնցով գնալով՝ համոզվի, որ գրողը գալիս է իր մանկությունից, իր եզերքից, իր ժամանակի ու հայրենիքի, բարքերի ու հարաբերությունների ծնունդն է: Եվ այդ ամենը դառնում է հիմք և ասելիք, ոդի ու թրթիռ, պատճառ ու տրամադրություն, բովանդակություն ու ձև, գեղագետի հայացք ու բարոյականություն, աշխարհայացք մարդու կյանքում, խոսքում: Գրողի խոսքը դառնում է զրուցակից ժամանակի ու տարածության մեջ: Այն մեկ հարց է, մեկ՝ պատասխան:

Զանազան հարաբերությունների կրողն է գրողը, նրանց մեկնաբանը, գեղագետը, բարոյագետը: Եվ նրա խոսքը՝ ուղղված աշխարհին, մեր փնտրտուքների պատասխանն է, խոհերի թարգմանը, ապրումների՝ գեղարվեստականությամբ ճշմարտություն սփռող տարեգիրը…

Անսահման է խոսքի աշխարհը, և գրողներն այն առաքյալներն են, որ առաքելություն ունեն խոսք ասելու, արարելու, խոսքով ստեղծելու լույս, բարիք, ճշմարտություն, գեղեցկություն, վեհություն ու ճանապարհ՝ խոհականության, սրտի ու հոգու հազարանուն ու հազարաբույր, հազարաղողանջ ու հազարաթույր գանձեր նվիրելով աշխարհին, բառի նախաստեղծ էությունը զգալով ու ծավալելով որպես տիեզերահունչ ու տիեզերաշնորհ ղողանջներ:

Լսե՛նք նրանց:

Եզրակացություն

Գրողի հետ «հարցազրույցը» միջոց է, ճանապարհ՝ ընկալելու գրականության մշակների խոսքն ու աշխարհայացքը, ունենալու գիտելիքներ, հմտություններ, արժեքային համակարգ և դրսևորելու վերաբերմունք: Աշխատել եմ ներկայացնել տարբեր հեղինակների խոսքի շերտերը և նաև այն միջոցները, որոնցով գրականության ուսուցիչը պիտի օգնի աշակերտին՝ թափանցելու այդ շերտերի խորքը, զարգանելու իր իմացականությունը, զգացմունքները, ձևավորելու կամ խորացնելու կարողունակություններ:

Ուսուցիչը կոչված է կազմակերպելու գրողի և աշակերտի երկխոսությունը, որի ակնկալվող արդյունքը վերջինիս կողմից հեղինակի ասելիքի ըմբռնումն է, աշխարհայացքի հիմք դարձնելը, նրա մատնանշած ուղիներով ընթանալը, ուղիներ փնտրել-գտնելը՝ իրեն ու աշխարհը ավելի լուսավոր, արդար ու մաքուր դարձնելու ակնկալիքով ու կամքով:

Գրական երկերն ու նրանց հեղինակները, հաղթահարելով ժամանակի և տարածության պատնեշները, հրամայում, համոզում,հորդորում, խնդրում ու աղաչում են մեզ ճանաչել աշխարհը, մարդուն, մեր զգացմունքների, բարոյական ու հոգևոր աշխարհը, արարքներն ու միտքը պահել ու դարձնել աղտ-աղարտից զերծ, լինել աշխարհաշեն ու լուսամիտ:

Բաց պահենք մեր ընկալումի, իմացականության, հոգու, մտքի, սրտի ու կամքի ունկերը Խոսքի առաջ, որ կատարելության տանող արարումի ու սիրո ճամփաներով ընթանանք:

Օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկ

1. Աղայան Ղ., Հեքիաթներ, «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 2004:
2. Ավետիսյան Զ., Գեղարվեստական մտածողության հետքերով, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985:
3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004:
4. Գասպարյան Դ., Ժամանակ և շարժում, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984:
5. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայ գրականություն, Քրեստոմատիա, Երևան, 2007:
6. Թումանյան Հովհ., Հատոր 4, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, Երևան, 1991:
7. Թումանյան Հովհ., Քառյակներ, Երևան, 1994:
8. Հայ գրականություն, Դասագիրք 12-րդ դասարանի համար, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2016:
9. Հայ դասական քնարերգություն, Հատոր 1, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1986:
10. Հայ դասական քնարերգություն, Հատոր 2, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1987:
11. Հայկական ժողովրդական հեքիաթներ, Մաս 2, ՄՀՄ գրատուն, Երևան, 2015:
12. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք,Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1986:
13. Մաթևոսյան Հ., Հատոր 1, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն,1985:
14. Մահարի Գ., Այրվող այգեստաններ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1966:
15. Միրիջանյան Լ., Պատմության և առասպելի սահմանները, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1986:
16. Սևակ Պ., Եղիցի լույս, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1992:
17. Տերյան Վ., Բանաստեղծություններ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1985:
18. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:
19. Քուչակ Նահապետ, Հարյուր ու մեկ հայրեն, «Սովետական գրող»

հրատարակչություն, Երևան, 1988:

Կայքէջեր

1. http://www.tarntercum.ru/2017/01/nahapet-quchak-hayrenner.html /Քուչակ/
2. https://www.youtube.com/watch?v=6gmRVWVarl4 /Համո Սահյան/
3.https://www.google.com/search?q=%D5%80%D5%8A%D5%89&oq=%D5%80%D5%8A%D5%89&aqs=chrome.0.69i59j0i30.8498j0j7&sourceid=chrome&ie=UTF-8 /Հանրակրթության պետական չափորոշիչ/
4.https://hy.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%AB%D6%80%D5%A1%D5%B5%D6%80_%D4%B1%D5%BE%D5%A5%D5%BF%D5%AB%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6_(%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D5%A3) /Ժիրայր Ավետիսյան/
5.https://www.youtube.com/watch?v=GMuDMQIqVcIhttps://hy.wikiquote.org/wiki/%D4%B3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80_%D5%86%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D6%81%D5%AB /Գրիգոր Նարեկացի/
6.http://armenianhouse.org/teryan/poems-am/dream.html /Վահան Տերյան՝ «Մթնշաղի անուրջներ»՝
7.https://www.youtube.com/watch?v=SQ0HDhbqrmw /Պարույր Սևակ/
8.https://www.facebook.com/watch/?v=318647175973674 / /Գուրգեն Մահարի՝ «Այրվող այգեստաններ»/
9.https://lib.mskh.am/images/books/Nor-taxer_M.Mecarenc.pdf /Միսաք Մեծարենց՝ «Նոր տաղեր»/
10.https://www.youtube.com/watch?v=rF_aPT2tWJo / Հովհ. Թումանյան՝ «Անուշ»
11.https://www.youtube.com/watch?v=GMuDMQIqVcI /Ալեքսանդր Շիրվանզադե՝ «Քառս»/
12.https://hy.wikisource.org/wiki/%D5%80%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF:%D5%8D%D5%A1%D5%B5%D5%A1%D5%A9-%D5%86%D5%B8%D5%BE%D5%A1 /Սայաթ-Նովա/
13.http://www.tarntercum.ru/2020/05/hrant-matevosyan-patmvacqner.html /Հրանտ Մաթևոսյան/

Հավելված

(դասի պլան և սահիկահանդես)

Ալիսիա Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» բանաստեղծության ուսուցման դասի պլան

Առարկան - Մայրենի

Դասարանը - 5 -րդ

Ուսուցիչ- Արսենյան Կարինե

Թեման -Ալ.Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» բանաստեղծությունը

Դասի տևողությունը - 2 դասաժամ (90 րոպե)

Դասի բնույթը-Նոր նյութի հաղորդման, համագործակցային

Ձևավորվող կարողունակություններ – Լեզվական, ինքնաճանաչողական, մշակութային

Հիմնական հասկացություններ – Հաղորդակցում, ընթերցանություն

Ենթահասկացություններ – Բանավոր և գրավոր հաղորդակցում, տեքստի գեղագիտություն, տեքստի տրամաբանություն

Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ – Պատճառ և հետևանք, ժամանակ և տարածություն

Դասի նպատակները՝

1.խորացնել աշակերտների գիտելիքները և սերը հայրենի երկրի ու գյուղի հանդեպ.

2. ծանոթացնել նամակ-բանաստեղծությանը.

3. տեղեկություններ տալ Սփյուռքի և սփյուռքահայ գրականության մասին.

4. ծանոթացնել Ալիսիա Կիրակոսյան բանաստեղծուհու աշխարհին:

Վերջնարդյունքներ՝

Աշակերտները

1. կընկալեն «Նամակ առ Հայաստան» բանաստեղծության ոգին, ասելիքը, խորքը.

2. կկարողանան լեզվական նյութը ընկալել և ներկայացնել ըստ բնագրի (բառային աշխատանք, պարզ և բարդ նախադասությունները ճանաչել).

3. տեղեկույթի կտիրապետեն Հայաստանի և Օշականի վերաբերյալ.

4. կկատարեն տարրական հետազոտական աշխատանք.

5. կաշխատեն խմբում՝ դրսևորելով համագործակցային հմտություններ.

6. կդրսևորեն և կզարգացնեն տրամաբանական և գեղարվեստական մտածողությունը՝ կարողանալով հասկանալ բառի խորքը, խոսքը նկարել, պատկերավոր ներկայացնել գաղափարներ, մտքեր, զգացմունքներ:

Դասի կահավորումը- Դասագրքեր, տետրեր, թղթեր, մատիտներ, գրքեր՝ Հայաստանը և Օշականը ներկայացնող, իմ «Մաշտոցապատում օշականյան» գիրքը և.ս, ցուցապաստառներ, գրատախտակ, համակարգիչ, տեսանյութեր Հայաստանի, Օշականի, Ալիսիա Կիրակոսյանի, Սփյուռքի մասին

Դասին կիրառվող տեղնոլոգիաներ, մեթոդներ, հնարներ - Նախագծային, համագործակցային, զարգացնող տեխնոլոգիաների տարրեր, համադրում, զրույց, փոքրիկ դասախոսություն, ուղղորդված ընթերցանություն, խմբային հետազոտություն, գրավոր շարադրանք, «Բանալի բառեր և կողպեք», «Կենաց ծառ», «Ծաղկաթերթեր», տեսաշարի ցուցադրում, մեկնաբանություն, քննարկում, պատկերագրում

Միջառարկայական կապ- Հայրենագիտության, հայոց եկեղեցու պատմության, կերպարվեստի, հայոց պատմության, աշխարհագրության, ինֆորմատիկայի հետ

Ներառարկայական կապ - Անդրադառնալ կոչականին, նամակի տեսակներին, Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությանը, սփյուռքահայ գրողներին

Դասի ընթացքը - Կիրառել ԽԻԿ համակարգը

1.Մուտք /4 րոպե/ - Տեսաշարին զուգահեռ՝ իմ հայրենասիրական բանաստեղծություններից մեկից տողեր, խմբով արտասանություն՝ «Ես իմ անուշ Հայաստանի բանաստեղծությունը»

2. Խթանում /20 րոպե/

ա. Խոսք մեր երկրի մասին, տեսաշար՝ հայաստանյան պատկերներ

բ. Զրույց Օշականի մասին, հայրենական արժեքների վերհանում, կարևորում, հարց ու պատասխան

գ. Տնային հանձնարարության ստուգում- «Նամակ առ Օշական» շարադրությունների ընթերցում, քննարկում

դ. Դասախոսություն-զրույց Սփյուռքի և սփյուռքահայ գրողների մասին

3. Իմաստի ընկալում /35 րոպե/

ա. Ուսուցիչը ներկայացնում է Կիրակոսյան մարդուն և բանաստեղծուհուն:

բ. Բանաստեղծության ընթերցում, մեկնաբանում, վերլուծություն (տեսաշարին զուգահեռ). անդրադառնալ լեզվին, իսպաներենից թարգմանված լինելուն

գ. Զրույց նամակի տեսակների, նամակ-բանաստեղծության մասին

դ. Բառային աշխատանք

ե. Ընթերցում են աշակերտները. ուղղորդված ընթերցանություն

զ. Լեզվական աշխատանք՝ բնագրում գտնել պարզ և բարդ նախադասություններ, գտնել կոչականը

է. Խմբային հետազոտություն՝ գտնել բանալի բառեր, ներկայացնել որևէ տան ասելիքը, շարադրել և նկարել՝ խորհրդանիշներ գտնելով

ը. Դասարանով գտնել այնպիսի «կողպեք-արտահայտություն», որը կբացվի իրենց բանալի բառերով.

4. Կշռադատում /14 րոպե/

ա. Կատարել «Կենաց ծառ» պատկեր-վարժությունը՝ որպես բուն ընտրելով «Նամակ առ Հայաստան» բառակապակցությունը, միասին քննարկման և փոխընկալման արդյունքում անվանել ծառի արմատները, ճյուղերը, պտուղները, տերևները: Աշակերտները կգան եզրահանգման, որ Ա. Կիրակոսյանի բանաստեղծությունը խոր հայրենասիրությամբ է շնչում, կհասկանան նրա բառերի և զգացմունքների աշխարհը:

բ. Այս աշխատանքը անհատական է. աշակերտները կգրեն փոքրիկ շարադրանք՝ «Ի՞նչ է պատգամում Ա. Կիրակոսյանը» վերնագրով, մի քանիսը կկարդան: Դարձյալ եզրահանգումներ կլինեն:

5. Անդրադարձ /6 րոպե/ - Կիրառել նկար-վարժություն և «ծաղկաթերթերի», «տերևների» և «ցողունի» միջոցով ստեղծել Կիրակոսյանի կարոտի ու խոսքի աշխարհի և զգացումների իրական ու տեսանելի պատկերը: Եվ միասին հասնել գեղեցիկ ու սրտի հետ խոսող եզրահանգումների, որոնցից կերևա և՛ բանաստեղծուհու սերը, և՛ աշակերտների:

6. Գնահատում /3 րոպե/- Գնահատել միավորներով և ուսուցանող գնահատականներով, գնահատել խմբային աշխատանքի լավագույն արդյունքները, առանձին աշակերտների գովաբանել, դիտողություններ անել,

ուղղորդել, ոգևորել, արժևորել նախօրոք լավագույն նյութեր ստեղծած և ակտիվ աշակերտների աշխատանքը:

7. Տնային հանձնարարություն /1 րոպե/- Ամբողջացնել նկարվերլուծությունները և շարադրանքը, բանաստեղծությունը սովորել անգիր:

8. Վերջում /2 րոպե/ - Աշակերտները մոտիկից կծանոթանան Հայաստանի և Օշականի մասին գրքերին, տեսանյութին, որպեսզի հետաքրքրվեն ու իմանան, թե ինչ կարելի է կարդալ, ուսումնասիրել՝ հայրենաճանաչությունը և մայրենիի իմացությունը խորացնելու համար: Կթերթեն, կնայեն բովանդակությունը, նկարները: Կխրախուսվի Ալիսիա Կիրակոսյանի ստեղծագործություններին ավելի լավ ծանոթանալու ցանկությունը: